

ԾԽԱԽՈՏԻ ՀՈՒՄՔԻ (ԹՈՒԹՈՒՆ) ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԵՎ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ
/լրամշակված/



Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	3
1.2	Հապավումներ	3
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	4
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	4
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	8
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր.....</i>	8
1.5.2	<i>Նախատեսվող վերագինման կարագիր.....</i>	9
1.5.3	<i>Իրադրային հատակագիծ.....</i>	11
1.5.4	<i>Գլխավոր հատակագիծ.....</i>	12
2.	ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ.....	14
2.1	Կազմակերպության բնութագիրը որպես մթնոլորտն աղտոտող աղբյուր	14
2.2	Ջրամատակարարում և ջրահեռացում.....	15
2.3	Ընդհանուր տեղեկություններ գոյացող թափոնների վերաբերյալ	17
2.4	Ձեռնարկության տարածքում թափոնների կուտակման վայրերի սխեմա.....	25
2.5	Սանիտարապաշտպանիչ գոտի	26
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	27
3.1	Դիտարկվող տարածքի ֆիզիկա-աշխարհագրական դիրքը.....	27
3.2	Տարածքի գեոմորֆոլոգիական, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական, սեյսմատեկտոնական պայմանները.....	27
3.3	Տարածաշրջանի հողերի նկարագիրը.....	30
3.4	Կլիման և օդերևութաբանական պայմանները	31
3.5	Օդային ավազան	34
3.6	Բուսական և կենդանական աշխարհը	34
3.6.1	Բուսական աշխարհը.....	35
3.6.2	Կենդանական աշխարհ.....	35
3.6.3	Պատմամշակութային հուշարձաններ	36
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	37
5.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	39
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	40
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	41

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող`	« ԻՆՏԵՐՆԵՑՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն`	ՀՀ ք. Մասիս, Հ. Վարդանյանի 10
Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ ք. Մասիս, Հ. Վարդանյանի 10
Հեռախոս`	+374 94 395339
Նախնական գնահատման հայտի կազմող`	«Էկո Բարիք Առողիտ» ՍՊԸ, հեռ. +374 94 395339

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ ընկերությունը կայացած և ուրույն տեղը ունեցող կազմակերպություն է, որը ծխախոտի արտադրության ասպարեզում առաջատար դիրք է զբաղեցնում Հայաստանի հանրապետությունում:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ծխախոտի արտադրության գործարանի վերազինման և շահագործման փուլի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Մասիս քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական

ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Մահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և

այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հողվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ

10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

2006 թվականի նոյեմբերի 27-ի բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք

ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշում, որով հաստատվել է ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին

ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (ՀՕ-373-Ն 01.07.2002թ.)

ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին». N 64-Ն որոշում:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը- (ՀՕ-211-Ն 2006թ.):

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52 03.04.2000թ.)

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22 23.11.1999թ.)

«Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» 2.2.5-004-10 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին N 27-Ն հրաման

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ-ն զբաղվում է ծխախոտի արտադրությամբ: Ընկերությանը պատկանող տարածքի մակեներ, համաձայն 03-003-0296-0154 կադաստրային ծածկագրով N 27022019-03-0063 սեփականության վկայականի, կազմում է 4.347 հա:

Հողատարածքի բնութագիրը՝

- հողատարածքի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների
- գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալություն

«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ - ն գտնվում է ՀՀ Արարատի մարզ, Մասիս քաղաքի վերջնամասում՝ արդյունաբերական գոտում, «ՄԱՍԻՍ ՏՈՒՐԱԿՈՆ» ՍՊԸ, «Գրանդ Մաստեր» ՍՊԸ և ջերմոցային տնտեսության հարևանությամբ, մոտակայքում բնակելի տները բացակայում են:

Մոտակայքում բացակայում են նախադպրոցական, դպրոցական, կազմակերպություններ, հիվանդանոցներ, անտառային, գյուղատնտեսական մշակահողեր և այլն: Աշխատանքային բոլոր գործունեությունները կատարվում են մեկ տարածքում:

Ընկերությունում աշխատում է 1870 մարդ, այդ թվում՝

- ԻՏԱ-120,
- բանվորներ-1750:

Ձեռնարկությունն աշխատում է 312 օր տարվա ընթացքում, երեք հերթափոխով, 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Ձեռնարկության արտադրողականությունը կազմում է 20 մլրդ. սիգարետ, 200 000 սիգար, 4000 կգ շիշա:

Ձեռնարկության վերազինման արդյունքում արտադրողականության փոփոխություն չի սպասվում, հետևաբար չկա նաև արտանետումների ավելացում:

Ընկերության արտադրամասերը կահավորված են աշխատողների կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու անհրաժեշտ բոլոր պարագաներով, մասնավորապես՝ հանդերձարաններ, ցնցուղարաններ, զուգարաններ և հանգստի սենյակներ:

Անմիջապես ընկերության տարածքում առկա են կանաչապատ և ծառածածկ գոտիներ:

Գործարանը բաղկացած է հետևյալ արտադրամասերից՝

- Ծխախոտի կտրտման արտադրամաս
- Սիգարետի արտադրամաս
- Սիգարի արտադրամաս
- Շիշայի արտադրամաս

- Եզրաթղթի մշակման արտադրամաս

Ծխախոտի կտրտման արտադրամասում առկա սարքավորումների միջոցով ծխախոտի հումքը վերամշակվում և տեղափոխվում է սիգարետի արտադրամաս: Սիգարետի արտադրամասում հաստոցների միջոցով փաթաթվում է սիգարետ և պահեստավորվում: Սիգարետի թուղթը ծակվում է եզրաթղթի մշակման արտադրամասում:

Նարգիլեի ծխախոտի արտադրամասում հումքից ձեռքով պատրաստվում է ծխախոտը և փաթեթավորվում հաստոցի միջոցով:

Սիգարի արտադրամասում ներմուծված ծխախոտի տերևից ձեռքով սիգար է փաթաթվում և ձեռքով փաթեթավորվում է տուփերով կամ դասավորվում է հյումփորների մեջ:

Ընկերության տարածքում արտադրական մասնաշենքերի դասավորվածությունը ներկայացված է գլխավոր հատակագծի վրա /տես 1.5.4 բաժին/:

Ընկերության գազամատակարարումը, ջրամատակարարումը և էներգամատակարարումը իրականացվում է համաձայն լիազոր մարմինների հետ կնքված պայմանագրերի /կցված հավելվածների բաժնում/:

Գործարանում առկա սիգարետի արտադրամասերում առկա են օդակարգավորման համակարգեր, որոնք բաղկացած են Clint և Carrier ապրանքանիշի սառեցնող չիլերներից և օդափոխության համակարգից:

1.5.2 Նախատեսվող վերագինման կարագիր.

Ընկերությունում նախատեսվում է ներդնել նոր սերնդի PROTOS հոսքագծեր, ստորև ներկայացված է հոսքագծի նկարագիրը:

PROTOS ծխախոտ արտադրող հոսքագիծը զինված է ժամանակակից տեխնոլոգիաներով և սահմանում է համաշխարհային չափանիշներ իր առաջադեմ տեխնոլոգիայով: Ծխախոտի գլանակ արտադրող հոսքագիծը լիցքավորվում է անհրաժեշտ նյութերով (ծխախոտ, ֆիլտր, թուղթ և այլն), որից հետո ծխախոտը ձևավորում է երկար ձողով, փաթաթում թղթի մեջ և կպցնում կարերը: Դանակները կտրում են այս «անվերջ ծխախոտը» անհրաժեշտ երկարությամբ: Այնուհետև ֆիլտրը ամրացվում է և փաթաթվում թղթով, որպեսզի ձևավորվի «կրկնակի ծխախոտ»՝ կապված ֆիլտրի հետ, որը այնուհետև կիսվում է: Հատուկ լազերները ֆիլտրի հատվածում ստեղծում են պերֆորացիաների անհրաժեշտ շարք, իսկ ծխախոտի վերականգնման հանգույցը ապահովում են ծխախոտի թանկարժեք հումքի առավելագույն օգտագործումը:

PROTOS հոսքագիծ




Տեխնիկական տվյալներ

Protos 80 ER		
1.	Սիգարետի տրամագիծ (մմ)	5.4
2.	Ֆիլտրի տրամագիծ (մմ)	5.35
3.	Արտադրողականություն (գլանակ/րոպե)	7300
4.	Լարում (Վ)	380
5.	Հզորություն (կՎտ)	34.2
6.	Հաճախականություն (Հց)	50
7.	Քաշ (կգ)	3200
8.	Ծրագրի լեզու	Անգլերեն


1.5.3 *Իրադրային հատակագիծ*



1.5.4 Քլիավոր հատակագիծ



Նոր մոնտաժվող հոսքազծի տեղադիրքը



2. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ

2.1 Կազմակերպության բնութագիրը որպես մթնոլորտն աղտոտող աղբյուր

«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ հիմնականում զբաղվում է ծխախոտի արտադրությամբ, գործունեության ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը հիմնականում արտանետվում են՝

- թուփոնի երկրորդային վերամշակման արտադրամասից
- N 1, 2, 3 կաթսայատներից

Գործունեության բնութագիրը՝

Թուփոնի երկրորդային վերամշակման արտադրամասում տեղադրված թուփոնի երկրորդային վերամշակման հոսքագիծը, որը փակ համակարգ է: Հոսքագիծը համալրված է երկաստիճան փոշեռսիչ սարքավորումներով՝ ցիկլոնով, որոնց միջոցով արտանետումները որսվում են 92%: Նշված գործընթացից արտանետվում են կախված մասնիկներ (փոշի թուփոնի):

Ծխախոտի արտադրամասում արտանետումները բացակայում են, քանի որ մշակված թուփոնը, որը ունի որոշակի խոնավություն տրվում է ծխախոտի պատրաստման հոսքագիծ: Ըստ ծխախոտի արտադրության տեխնոլոգիայի արտադրամասում տեղադրված են սարքավորումներ, որոնք ապահովում են խոնավության ցուցանիշները արտադրական տարածքներում:

- N 1 կաթսայատանը տեղադրված են 2 հատ կաթսաներ, որոնք նախատեսված են արտադրական գործընթացին գոլորշի մատակարարելու համար: Հիմնական վառելիքը բնական գազն է: Գազի այրման ժամանակ առաջացած վնասակար նյութերն են՝ ածխածնի օքսիդը և ազոտի օքսիդները:

- N 2 կաթսայատանը տեղադրված է 1 հատ կաթսա, որը նախատեսված է ջեռուցման և արտադրական գործընթացին գոլորշի մատակարարելու համար: Հիմնական վառելիքը փայտն է: Կաթսայատունը աշխատացվում է բացառապես միայն ջեռուցման սեզոնի ընթացքում, արտադրական պրոցեսի հետ կապված չէ: Կաթսան շահագործվում է վնասված փայտե տակդիրներով: Փայտի միջին տարեկան ծախսը – 2000մ³/տարի: Կաթսայում փայտի այրման արդյունքում առաջացած վնասակար նյութերն են՝ մոխիրը, ածխածնի օքսիդը , ազոտի օքսիդները :

- N 3 կաթսայատանը տեղադրված են 3 հատ կաթսաներ, որոնք նախատեսված են արտադրական գործընթացին գոլորշի մատակարարելու համար: Հիմնական վառելիքը բնական գազն է: Գազի այրման ժամանակ առաջացած վնասակար նյութերն են՝ ածխածնի օքսիդը և ազոտի օքսիդները:

Կաթսաները ապահովված են այրիչներով և այրման ռեժիմի ավտոմատ կարգավորիչներով, ինչպես նաև անվտանգությունը ապահովող անհրաժեշտ սարքավորումներով, վթարային անջատիչներով, ձայնային և լուսային ազդանշաններով: Ընդհանուր գազի տարեկան միջին ծախսը՝ 2 300 000 մ³/տարի (պահեստային վառելիք նախատեսված չէ): Ընդհանուր փայտի տարեկան միջին ծախսը՝ 2000մ³/տարի:

Թուփոնի երկրորդային վերամշակման գործընթացը կատարվում է գոլորշու միջոցով, խոնավ միջավայրում և ապահովված է երկաստիճան փոշեռսիչ սարքավորումներով՝ ցիկլոններով: Ուստի տեխնոլոգիական և փոշեզագամաքրման սարքավորումների արդիականության և

տվյալ արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառում արտադրության և կաթսաների համար չի նախատեսվում:

2.2 Ջրամատակարարում և ջրահեռացում

Ընկերությունում ջրամատակարարման աղբյուր է հանդիսանում Մասիս քաղաքի խմելու-տնտեսական ջրամատակարարման ցանցը: Այդ նպատակով «Վեոլիա Ջուր» ընկերության հետ կնքված է համապատասխան պայմանագիր /կցված հավելվածների բաժնում/:

Ձեռնարկությունում առաջացած տնտեսակենցաղային և արտադրական կեղտաջրերը ուղղվում են Մասիս քաղաքի կոյուղու կոլեկտոր:

Ձեռնարկությունում ջուրն օգտագործվում է տեխնոլոգիական, կոմունալ-կենցաղային և սանիտարական կարիքների համար:

«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊՈ

Ջրօգտագործման և ջրահեռացման հիմնական ցուցանիշները
(մ³/տարի)

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Հ/Հ	Ջրօգտագործողի անվանումը	Ջրօգտագործում						Հեռացվող ջուր
		Ընդամենը	Խմելու ջուր	Տեխն. ջուր	Շրջանառու	Անվերարդարծ օգտագործում	Կո-րուստ.	
1	2	3	4	5	6	7	8	9
	<i>Տեխնոլոգիական կարիքներ</i>							
1	Խոնավության ցուցանիշը ապահովող սարքավոր.	720	720	-	-	72	-	-
2	Փաթեթավ. մեք. սոսնձ. գլ. և այլ. սարքավ. լվացում	3480	3480	-	-	-	348	3132
	Ընդամենը	4200	4200	-	-	72	348	312
	<i>Օգնող արտադրություն</i>							
1	Կաթսայատներ	28350	28350	-	-	-	1350	27000
2	Ավտոմեքենաների լվացում	6000	6000	-	-	-	600	5400
	ԸՆԴԱՄԵՆԸ	34350	34350	-	-	-	1950	32400
	<i>Խմելու-տնտեսական կարիքներ</i>							
1	Կենցաղային	20418	20418	-	-	-	2042	18376
2	Ճաշարան	16128	16128	-	-	-	1613	14515
3	Հատակի լվացում	12600	12600	-	-	-	1260	11340
4	Բաց տարածքների ջրում	1800	1800	-	-	1800	-	-
5	Կանաչ տարածքների ոռոգում	630	630	-	-	630	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	51576	51576	-	-	2430	4915	44231
	<i>Ընդամենը ըստ ընկերության</i>	<i>90126</i>	<i>90126</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>3150</i>	<i>7213</i>	<i>79763</i>
	<i>Չափաքանակներ տար.</i>	<i>99139</i>	<i>99139</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>87741</i>
	<i>Չափաքանակներ օրվա</i>	<i>330,5</i>	<i>330,5</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>292,5</i>
	<i>Չափաքանակներ ժամ .</i>	<i>13,77</i>	<i>13,77</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>12,19</i>
	<i>Չափաքանակներ 1/ վրկ</i>	<i>3,83</i>	<i>3,83</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>3,39</i>

Աղյուսակ 1-ում օգտագործվել են ընկերության Ջրոգտագործման և ջրահեռացման անհատական նորմերի տվյալները:

2.3 Ընդհանուր տեղեկություններ գոյացող թափոնների վերաբերյալ

1. «Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում վտանգավոր թափոնին տրված ծածկագիրը հետևյալն է՝ 3533010013011

Վտանգավորության դասը՝ 1

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Թափոնի բաղադրությունը՝ սնդիկ 0,02-0,03%, ապակի՝ 96-98%, մետաղներ՝ 1.7-2%, լյումինոֆոր 2-3%:

Բնութագիրը՝ սնդիկի գոլորշիները խիստ թունավոր են շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար: Ընկնելով շրջակա միջավայր, այն փոխանցվում է օդային հոսանքներով, այնուհետև կրկին նստում է հողի վրա: Սնդիկը հողից անցնում է գետերի, լճերի և օվկիանոսների մեջ: Սնդիկի ներթափանցումը մարդու օրգանիզմ հաճախ տեղի է ունենում դրա գոլորշիների ներշնչման ժամանակ, որոնք հոտ չունեն: Սնդիկի նույնիսկ փոքր քանակների ազդեցության հետևանքով, կարող են առաջանալ առողջական խնդիրներ և ծանր թունավորումներ: Սնդիկը թունավոր ազդեցություն է թողնում նյարդային, մարսողական և իմունային համակարգերի, թոքերի, երիկամների, մաշկի և աչքերի վրա:

Սնդիկը և դրա միացությունները հատկապես վտանգավոր են հղի կանանց համար, քանի որ դրանք սպառնալիք են պտղի զարգացման համար: Սնդիկի հետ կապված սուր թունավորումները կարող են հանգեցնել մահվան: Քրոնիկ թունավորումները տեղի են ունենում մարդու վրա սնդիկի գոլորշիների ցածր չափաքանակներով երկարատև ազդեցության պատճառով: Կենդանի օրգանիզմի համար գոյություն չունի անվտանգ չափաքանակ: Վթարային իրավիճակների դեպքում անհրաժեշտ է աշխատակիցներին տարհանել աղտոտված տարածքից, առնվազն մի քանի ժամ օդափոխել շինությունը, տարածքը, կահույքը և իրերը մաքրել կալիումի պերմանգանատի լուծույթով, այնուհետև ջրով: Թափոնների ժամանակավոր պահման տարածքում առկա է կալիումի պերմանգանատ և լուծույթ պատրաստելու համար անհրաժեշտ առնվազն տասը լիտրանոց տարա:

Թափոններն առաջանում են ձեռնարկության լուսավորության ապահովման արդյունքում: Խոտանված լամպերը զգուշությամբ փաթեթավորվում են թղթի կամ սովաբաթղթի մեջ, տեղավորվում սովաբաթղթե կամ փայտե տարաներում և պահվում առանձնացված սենյակում: Սենյակը կողպված է, ունի լուսավորություն և օդափոխություն:

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է թափոնի անձնագրային տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 0,05 տոննա:

Ընկերության տարածքում նախորդ տարի սնդիկային լամպերի թափոններ չեն առաջացել: Առաջանալու դեպքում կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպությանը:

2. «Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 9211010013012:

Վտանգավորության դասը՝ 2

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը – պլաստմասսե իրան՝ 15 %, կապարե թիթեղներ՝ 65-70 %, էլեկտրոլիտ /ծծմբական թթվի լուծույթ/՝ 15-20%:

Բնութագիրը՝ էլեկտրոլիտը կոռոզիոն ակտիվ է, հրդեհապայթյունավտանգ չէ, թունավոր է շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար, ծծմբական թթուն առաջացնում է մաշկի այրվածքներ, շնչուղիների և լորձաթաղանթի գրգռվածություն: Ծծմբական թթվի գոլորշիները շնչելիս դժվարանում է շնչառությունը, առաջանում է հագ, երբեմն լարինգիտ, տրախեիտ, բրոնխիտ և այլ հիվանդություններ:

Կապարը կուտակվում է օրգանիզմում՝ առաջացնելով քրոնիկ թունավորում, ազդում է նյարդային համակարգի, տարբեր օրգանների և արյան վրա: Պլաստմասսան ֆիզիոլոգիական տեսանկյունից համարյա անվնաս է : Սրանց քայքայումից կամ այրումից կարող են առաջանալ ֆտալատներ, որոնք ընկնելով մարդու օրգանիզմ աննշան մասն է ներծծվում մարսողական համակարգով: Ֆտալատները կարող են չնչին չափով գրգռել մաշկը և լորձաթաղանթը: Բույսերի վրա ֆտալատների ազդեցության ժամանակ կարող են առաջանալ քլորոզներ:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և էլեկտրական միջոցների շահագործման արդյունքում: Կապարե կուտակիչները շահագործման համար պիտանելիությունը կորցնելու դեպքում փոխարինվում են նորերով: Ընկերության կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների սպասարկման արդյունքում առաջացել են 0,1 տոննա բանեցված կապարե կուտակիչների թափոններ:

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է նախորդ տարիների տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 0,4 տոննա:

«Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ ավտոտրանսպորտի արդեն ոչ պիտանի կապարային մարտկոցները փոխարինվում են ավտոտեխսպասարկման կայաններում:

3. «Իրենց սպառողական հատկությունները կորցրած կոմպրեսորային յուղերի մնացորդներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5410031102033:

Վտանգավորության դասը՝ 3

Ֆիզիկական բնութագիրը՝ հեղուկ

Բաղադրությունը –կոմպրեսորային յուղ՝ 96,7 %, մեխանիկական խառնուրդներ՝ 1,5%, ջուր՝ 1,8%:

Բնութագիրը՝ դյուրավառ է, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են կոմպրեսորային համակարգերի շահագործման արդյունքում: Կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները՝ յուղերը պարբերաբար փոխարինվում են նոր քանակներով:

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է նախորդ տարիների ցուցանիշների հիման վրա, որը հավասար է 1 տոննա:

Նախորդ տարում ընկերությունում գոյացել են 0,4 տոննա կոմպրեսորային յուղերի մնացորդներ թափոններ, որն օգտագործվել է սեփական կարիքների համար, մասնավորապես արտադրական հոսքագծերի և մեխանիզմների յուղման համար:

4. «Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5410030202033:

Վտանգավորության դասը՝ 3

Տիգիկական բնութագիրը՝ հեղուկ

Բաղադրությունը – յուղ՝ 95,7 %, մեխանիկական խառնուրդներ՝ 1,2%, ջուր՝ 2%, սուլֆատային մոխիր՝ 1,1%:

Բնութագիրը՝ դյուրավառ է, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են ավտոմեքենաների շարժիչների յուղման արդյունքում: Կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները՝ յուղերը պարբերաբար փոխարինվում են նոր քանակներով: Յուղերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պատված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով:

Ընդհանուր առմամբ շարժիչային յուղերը, հանդիսանալով նավթավերամշակման արդյունք և հիմնականում կազմված լինելով տարբեր բարձր- և ցածրամոլեկուլային ածխաջրածինների խառնուրդից, վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար: Ընկնելով շրջակա միջավայր բանեցված շարժիչային յուղերի մի փոքր մասն է ենթարկվում քայքայման և հեռացվում բնական պրոցեսների արդյունքում: Իսկ դրանց հիմնական մասը հանդիսանում է հողի, ստորերկրա և մակերևույթային ջրերի ու մթնոլորտի աղտոտիչ: Բանեցված շարժիչային յուղով հողի աղտոտման ժամանակ հողային օրգանիզմների համար ստեղծվում է նոր էկոլոգիական պայմաններ: Այս հողերում տեղի է ունենում պեղոբիոտների տեսակային էկոլոգիական բազմազանության կրճատում ավտոտրոֆ ասիմիլյացիայի վատացում , հողային կենդանիների ֆունկցիոնալ ակտիվության ու հողի ֆերմենտային ակտիվության անկում: Դեպի հողի մակերես նավթամթերքի հոսքից հետո առաջին հերթին այն ներծծվում է հող և խախտում է հողի ջրաօդային հավասարակշռությունը: Դրա արդյունքում առաջանում է հողի դեֆլյացիա, հարթ և գծային էրոզիա: Դա էլ իր հերթին բերում է հողի աղքատացմանը և կենսաարտադրողականության անկմանը:

Թափոններն անհրաժեշտ է առանձնացնել և տեղադրել հերմետիկ փակվող տարաներում, որոնք դրվում են մետաղական տակդիրների վրա: Տակդիրը պետք է ունենա թափված յուղը պահելու հնարավորություն՝ ոչ պակաս քան ընդհանուր ծավալի 5%-ի չափով: Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդները հատուկ մշակումից հետո կարելի է օգտագործել յուղերի այրման համար առանձնացված կաթսայա- տներում որպես վառելանյութ:

Ընկերության կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների սպասարկման արդյունքում առաջացել են 0,4 տոննա ավտոմոբիլային յուղերի թափոններ, որոնք փոխարինվել են ավտոտեխսպասարկման կայաններում:

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է թափոնի նախորդ տարիների ցուցանիշների հիման վրա, որը հավասար է տարեկան 0,9 տոննա:

5. «Յուղոտված լաթեր» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5820060001014:

Վտանգավորության դասը՝ 4

Տիգիկական բնութագիրը՝ պինդ

Քիմիական բաղադրությունը – լաթեր՝ 75-85%, յուղ՝ 10-15%, ջուր՝ 5-10%:

Բնութագիրը՝ հրդեհավտանգ է, ինքնաբռնկվող, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են սարքավորումների և այլ տեխնիկական միջոցների շահագործման և վերանորոգման ընթացքում: Յուղոտված լաթերի կուտակումն անհրաժեշտ

է իրականացնել բետոնէ կամ խճաքարով պատված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով:

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է նախորդ տարիների տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 0,6 տոննա:

Նախորդ տարում առաջացել են «Յուղոտված լաթեր» թափոն 0,3 տոննա, որը տեղափոխվել է Մասիսի աղբավայր (պայմանագրի պատճեն կցվում է):

6. «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 9120040001004:

Վտանգավորության դասը՝ 4

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը – թուղթ և սովաբաթուղթ՝ 35-40% , պոլիէթիլեն՝ 30-35%, ապակի՝ 5-6%, ռետինե ձեռնոցներ՝ 3-4%, մետաղական տարաներ՝ 15-20%, այլ՝ 5-10%:

Բնութագիրը՝ հրդեհապայթյունավտանգ չէ, առաջացնում է տարածքի աղտոտում, էկոթունավոր է:

Թափոնները գոյանում են կազմակերպության աշխատակիցների կենսագործունեության, տարածքների մաքրման աշխատանքների արդյունքում: Կազմակերպության տարածքում տեղադրված են 24 հատ աղբամաններ, որոնցում կուտակվում է կենցաղային աղբը մինչև աղբավայր տեղափոխելը :

Նախորդ տարում առաջացել են «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի/» թափոն 0,4 տոննա, որը տեղափոխվել է Մասիսի աղբավայր (պայմանագրի պատճեն կցվում է):

Թափոնների հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է թափոնի նախորդ տարիների տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 72 տոննա:

7. «Կարծրացած տարասեռ պլաստմասսաների խառնուրդների թափոններ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5710990001004:

Վտանգավորության դասը՝ 4

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը-պոլիպրոպիլեն՝ 45%, պոլիէթիլեն՝ 30%, այլ պոլիմերներ՝ 20%, մեխանիկական խառնուրդներ՝ 5%:

Բնութագիրը՝ հրդեհապայթյունավտանգ չէ, կրակի առկայությամբ այրվում է, էկոթունավոր է:

Թափոնները գոյանում են հումքի համար նախատեսված տարաներից և ստաբիլիզատորներից:

Նախորդ տարում գոյացած 2 տոննա Կարծրացած տարասեռ պլաստմասսաների խառնուրդների թափոնները տեղափոխվել է աղբավայր (պայմանագրի պատճեն կցվում է):

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է թափոնի նախորդ տարիների տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 4 տոննա:

Կարծրացած տարասեռ պլաստմասսաների խառնուրդների թափոնները կուտակվում են մյուս թափոններից առանձին :

8. «Բանեցված օդաճնշիչ դոդեր» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5750020013004:

Վտանգավորության դասը՝ 4

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը – բուտադիենային կաուչուկ՝ 98%, պողպատ՝ 2%:

Բնութագիրը՝ պայթյունավտանգ չէ, սակայն կրակի առկայությամբ կարող է այրվել, թունավոր շրջակա միջավայրի համար:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Դոդերը պարբերաբար փոխարինվում են նորերով: Ընդհանուր առմամբ բանեցված դոդերը շրջակա միջավայրում քայքայվում են մոտ 100 տարում: Դոդերի շփումը անձրևաջրերի և գրունտային ջրերի հետ առաջացնում է որոշ տոքսիկ օրգանական նյութերի /դիբութիլ ֆտալատ, ֆենատրապեն և այլն/ լվացում, որոնք ընկնելով շրջակա միջավայր բացասական ազդեցություն են թողնում հողի, բուսական և կենդանական աշխարհի վրա:

Ընկերության կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների սպասարկման արդյունքում առաջացել են 0,5 տոննա բանեցված օդաճնշիչ դոդերի թափոններ, որոնք փոխարինվել են ավտոտեխսպասարկման կայաններում:

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է նախորդ տարիների տվյալների հիման վրա՝ տարեկան 2,5 տոննա:

9. «Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ/այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 3513110001004:

Վտանգավորության դասը՝ 4

Բաղադրությունը՝ պողպատ՝ ջարդոն 40% և փոշի՝ 10%, թուջ՝ ջարդոն 40% և փոշի՝ 10%:

Թափոններն առաջանում են մետաղամշակման արդյունքում:

Բնութագիրը՝ մարդկանց մոտ փոշին կարող է առաջացնել շնչառական օրգանների հիվանդություններ:

«Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ /այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի/» թափոնները հավաքվում են մետաղական տարաների մեջ և տեղադրվում են անձրևից և քամուց պաշտպանված տարածքներում:

Թափոնների հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է թափոնի նախորդ տարիների տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 3 տոննա:

Ընկերության տարածքում նախորդ տարի թափոններ չեն առաջացել: Առաջանալու դեպքում կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպությանը:

10. «Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող իրենց սպառողական հատկությունները կորցրած տրանսֆորմատորային յուղերի մնացորդներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5410030702033:

Վտանգավորության դասը՝ 3

Ֆիզիկական բնութագիրը՝ հեղուկ

Քիմիական բաղադրությունը – յուղ՝ 96,5 %, մեխանիկական խառնուրդներ՝ 3,5%:

Բնութագիրը՝ հրդեհավտանգ է, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են տրանսֆորմատորային կայանքների շահագործման արդյունքում: Յուղերը հաշվարկված են որոշակի ժամանակամիջոցի համար, որից հետո, կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները, փոխարինվում են նոր քանակներով:

Յուղերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պահված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով:

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է թափոնի նախորդ տարիների տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 2,5 տոննա:

Թափոններն առանձնացվում և տեղադրվում են հերմետիկ փակվող տարաներում, որոնք դրվում են մետաղական տակդիրների վրա: Տակդիրն ունի թափված յուղը պահելու հնարավորություն՝ ոչ պակաս քան ընդհանուր ծավալի 5%-ի չափով: Այնուհետև յուղերն օգտագործվելու են ձեռնարկության կարիքների համար կամ վաճառվելու են յուղերի վերականգնմամբ զբաղվող կազմակերպություններին:

Նախորդ տարում իրենց սպառողական հատկությունները կորցրած տրանսֆորմատորային յուղերի մնացորդներ չեն առաջացել: Առաջանալու դեպքում կօգտագործվեն սեփական կարիքների համար:

11. «Հալոգեններ չպարունակող և իրենց սպառողական հատկությունները կորցրած հիդրավլիկ յուղերի մնացորդներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 5410031302033:

Վտանգավորության դասը՝ 3

Տիգիկական բնութագիրը՝ հեղուկ

Քիմիական բաղադրությունը – հիդրավլիկ յուղ՝ 98,5 %, մեխանիկական խառնուրդներ՝ 1,5%:

Բնութագիրը՝ հրդեհավտանգ է, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են հիդրավլիկ սարքավորումների սպասարկման, վերանորոգման, շահագործման և յուղի փոխման արդյունքում: Յուղերը հաշվարկված են որոշակի ժամանակամիջոցի համար, որից հետո, կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները, փոխարինվում են նոր քանակներով:

Յուղերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պահված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով:

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է թափոնի նախորդ տարիների տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 2 տոննա:

Թափոններն առանձնացվում և տեղադրվում են հերմետիկ փակվող տարաներում, որոնք դրվում են մետաղական տակդիրների վրա: Տակդիրն ունի թափված յուղը պահելու հնարավորություն՝ ոչ պակաս քան ընդհանուր ծավալի 5%-ի չափով:

Նախորդ տարում առաջացել են 0,5 տոննա հիդրավլիկ յուղերի մնացորդներ թափոններ, որոնք օգտագործվել են սեփական կարիքների համար, մասնավորապես սարքավորումների և մեխանիզմների յուղման համար:

12. «Տարատեսակ փայտի փոշի և տաշեղ/օրինակ՝ փայտի թեփ և տաշեղ պարունակող փայտե-տաշեղային և/կամ փայտե թելքավոր սալիկներ »թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 1719010301004:

Վտանգավորության դասը՝ 4

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը – ցելյուլոզա (փայտանյութ)՝ 85-90%, ջուր՝ 10-15%:

Թափոններն առաջանում են փայտամշակման և փայտե իրերի նորոգման արդյունքում, որոնք կուտակվում են փայտանյութի թափոնների ժամանակավոր կուտակման հատուկ տարածքում, այնուհետև որպես վառելիք օգտագործվում է ընկերության կաթսայատանը:

Նախորդ տարի ընկերությունում տարատեսակ փայտի փոշու և տաշեղի թափոններ չեն առաջացել:

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է թափոնի նախորդ տարիների տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 2,5 տոննա/տարի:

13. «Եռակցման խարամ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 3140480001994

Վտանգավորության դասը՝ 4

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը – երկաթի օքսիդ՝ 14.7%, մանգանի օքսիդ՝ 12.8%, կալցիումի օքսիդ՝ 6.3%, սիլիցիումի օքսիդ՝ 50.1%, տիտանի օքսիդ՝ 14.5%, ալյումինի օքսիդ՝ 1.4%, այլ միացություններ՝ 0.2%:

Թափոններն առաջանում են եռակցման աշխատանքների արդյունքում:

Եռակցման խարամ թափոնը կարելի է օգտագործել շինարարության մեջ բետոնե կոնստրուկցիաներ պատրաստելու, ինչպես նաև տեղափոխել համապատասխան աղբավայր կամ պոլիգոն սահմանված կարգով տեղադրելու համար:

Նախորդ տարում ընկերության տարածքում առաջացել են 0,03 տոննա «Եռակցման խարամ» թափոններ, որը տեղափոխվել է Մասիսի աղբավայր համաձայն պայմանագրի (պայմանագրի պատճենը կցվում է):

Թափոնների հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է ընկերության կողմից իրականացվելիք եռակցման աշխատանքների հիման վրա, որը հավասար է տարեկան 0,2 տոննա:

14. «Թութոնի փոշի» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 1140410211013

Վտանգավորության դասը՝ 3

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը՝ նիկոտին՝ 1.4%, շաքար՝ 3.8%, քլոր՝ 0.5%, ջուր՝ 17%, կարբոնատներ՝ 25%, նիտրատներ՝ 1%, ֆոսֆատներ՝ 1%, սպիտակուցներ՝ 13%, հանքանյութեր՝ 16%, եթերային յուղեր՝ 1%, խեժանյութեր՝ 7%, պոլիֆենոլներ՝ 3.3%, ածխաջրեր՝ 10%

Թափոնն առաջանում է ծխախոտի արտադրման արդյունքում:

Թափոնն անհրաժեշտ է պահել փակ տարողություններում, հատուկ առանձնացված զով և չոր տարածքում: Անհրաժեշտ է բացառել խոնավության թափանցումը, զերծ պահել կրակի առկայությունից:

Նախորդ տարի առաջացել է «Թուրքի փոշի» թափոն 2 տոննա, որը տեղափոխվել է Մասիսի աղբավայր համաձայն պայմանագրի (պայմանագրի պատճենը կցվում է):

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է թափոնի նախորդ տարիների տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 70 տոննա:

15. «Փայտանյութի մոխիր» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 3130060011995

Վտանգավորության դասը՝ 5

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ

Բաղադրությունը՝ կալցիումի կարբոնատ՝ 17%, կալցիումի սիլիկատ՝ 16,5%, կալցիումի սուլֆատ՝ 14%, կալցիումի քլորիդ՝ 12%, օրթոֆոսֆատ՝ 20% և այլ հանքային խառնուրդներ՝ 20,5%:

Թափոնն առաջանում է կաթսայատան շահագործման արդյունքում, որտեղ որպես վառելիք օգտագործվում է փայտանյութ:


Նախորդ տարի առաջացել է «Փայտանյութի մոխիր» թափոն 7 տոննա, որը տեղափոխվել է Մասիսի աղբավայր համաձայն պայմանագրի (պայմանագրի պատճենը կցվում է):

Թափոնի հաջորդ տարվա գոյացման նորմատիվը որոշվել է թափոնի նախորդ տարիների տվյալների հիման վրա, որը հավասար է տարեկան 10 տոննա:

Ձեռնարկության վերազինման արդյունքում թափոնների քանակը մնում է անփոփոխ:

2.4 Ձեռնարկության տարածքում թափոնների կուտակման վայրերի սխեմա

Թափոնների կուտակման վայրերի սխեմա



1. Ավտոկայանատեղի
2. Երկաթյա տակաոներ յուղի կուտակման համար, թվով 20 հատ
3. Աղբամաններ չտեսակավորված աղբի համար, թվով 24 հատ
4. Աղբաման յուղոտված լաթերի համար, թվով 1 հատ
5. Աղբաման եռակցման խարամի համար, թվով 1 հատ
6. Աղբաման տարասեռ պլաստմասսային համար, թվով 2 հատ
7. Աղբարկղ թութունի փոշու համար, թվով 120 հատ
8. Տարա փայտանյութի մոխիրի համար, թվով 2 հատ

2.5 Սանիտարապաշտպանիչ գոտի

Սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը թուրքունի վերամշակման ըստ CH 245-71 ստանդարտի սահմանված են 50մ /V դաս/, ինչը լիովին ապահովված է:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1 Դիտարկվող տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական դիրքը

Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրիին գյուղերին:

Մարզկենտրոն Արտաշատից գտնվում է 20 կմ դեպի արևմուտք, իսկ Երևանից 17 կմ դեպի հարավ:

3.2 Տարածքի գեոմորֆոլոգիական, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական, սեյսմատեկտոնական պայմանները

Ուսումնասիրվող համայնքը գտնվում է հանրապետության սեյսմակտիվ գոտիներից մեկում, Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասում:

Ժամանակակից Արարատի գոգավորության կառուցվածքը սկսվել է ձևավորվել վերին էոցեն-օլիգոցենի ժամանակահատվածում և մինչև հիմա ենթարկվում է ճկման: Դրա մասին է վկայում դեպրեսիայի կենտրոնական մասի նեոգենի հասակի գոյացությունների հզորության մեծացումը: Մասնավորապես լճային նստվածքների հզորությունը այստեղ կազմում է 400մ: Լճային նստվածքները ներկայացված են կոպճա-կավավազա-ավազա-ավազակավային գոյացումներով, ծածակված լճային կավերով, որտեղ հանդիպում են ոսպնյակաձև հրաբխային գոյացումներ:

Ուսումնասիրված տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթները ներկայացված են մակերևութային համատարած լվացումով մակերևութային տեղումներով:

Ուսումնասիրված տարածքում տեխնածին երևույթները բացակայում են:

Տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները

Մասիս քաղաքի տարածքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ ռելիեֆային բնույթ:

Ուսումնասիրված տարածքում կարելի է առանձնացնել գեոմորֆոլոգիական մեկ էլեմենտ՝

Այլովիալ պրոյուվիալ ակումուլյատիվ հարթավայր, մակերևութի թեքությունը չի գերազանցում 10%:

Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները

Լիթոլոգիական տեսակետից Մասիս քաղաքի տարածքում առանձնացրել են հետևյալ երկրաբանական շերտախմբերը՝

1. Ժամանակակից այլովիալ-պրոյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և

կավային լցանյութով, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

2. Վերին չորորդական լճա-ալյուվիալ նստվածքներ ներկայացված Խճա-մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Մեծաբեկորային գրունտներով, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սեյսմիկ ազդեցության ժամանակ, քանի որ ստորգետնյա ջրերը, տեղադրված են մակերեսից 5մ-10 մ մակարդակի վրա: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

Գրունտային ջրերի առկայությունը կավային գրունտներում բացատրվում է ջրհագեցած ավազների բազմաթիվ ենթաշերտերով և ոսպնյակների առկայուցամբ, որը հանգեցրել է ստորգետնյա ջրերի ցիրկուլյացիայի բարդ պայմանների և ջրատար հորիզոնների առկայության:

Տարածքի լիթոլոգիական պայմանները

Լիթոլոգիական տեսակետից առանձնացվում են՝

Շերտ թիվ 1 Կավավազ բաց և մուգ մոխրագույն, գորշավուն երանգով, պինդ և փափուկ պլաստիկ թանձրության մինչև 35% քարակտորների պարունակությամբ, փոշենման ավազի ենթաշերտերով հաճախակի կարբոնատային և աղային, տարածքում կավավազները ներկայացված են նաև գերնստող տարատեսակով: Հզորությունը տատանվում է 2.3 – 5.4 մետր:

Շերտ թիվ 2 Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Հզորությունը տատանվում է 2.0 – 4.5 մետր:

Շերտ թիվ 3 Խճա-մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Հզորությունը տատանվում է 3.5 – 6.0 մետր:

Շերտ թիվ 4 Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

Հզորությունը տատանվում է 2.8 – 5.3 մետր:

Չորրորդական այրովիալ պրոյուվիալ առաջացումներ

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ուսումնասիրման համար օգտագործվել են տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների հետևյալ տարատեսակները.

Կավային գրունտներ (Շերտեր թթ. 1)

Բեկորային գրունտներ (Շերտեր թ. 2, 3, 4)

Ստորև աղյուսակում բերված են գրունտների միջինացված ֆիզիկամեխանիկական ցուցանիշները:

Ֆիզիկա մեխանիկական ցուցանիշներ	Չափման միավոր	Գրունտներ			
		շերտ 1	շերտ 2	շերտ 3	շերտ 4
1	2	3	4	5	6
Ծավալային կշիռ	կգ/մ ³	1700	1750	1850	1700
Տեսակարար շաղկապվածություն	ՄՊա	-	0.005	-	-
Ներքին շփման անկյուն	աստիճան	29	22	34	20
Դեֆորմացիայի մոդուլ	ՄՊա	20	15	25	15
Պայմանական հաշվարկային ճնշում	ՄՊա	0.25	0.15	0.30	0.20

Ելնելով տարածքի շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստական աշխատանքների ծավալներից և բնույթից, ինչպես նաև հիդրոերկրաբանական պայմաններից, գեոմորֆոլոգիական հատկանիշներից և լիթոլոգիական կառուցվածքից, ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է երկու ինժեներաերկրաբանական շրջան՝ բարենպաստ և անբարենպաստ:

ՀՀՇՆ II-6.02-2006 Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր՝ նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

I-3.2.1.4. Լանդշաֆտների դասակարգումը և գնահատականը

Լանդշաֆտի նկարագիրը

Ուսումնասիրող տարածքի լանդշաֆտը Արարատյան հարթավայրի կիսաանապատային լանդշաֆտային գոտին է՝ անապատների և մշակովի հողի

տեղամասերով, որոնք ձևավորվել են մարդու հազարամյա ագրոմշակութային գործունեության արդյունքում: Այստեղ ոռոգման խիտ ցանցի անցկացման շնորհիվ հողաբուսական ծածկույթը փոփոխված է այնպես, որ զգալի տարածություններում անհետացել են այդ գոտիներին բնորոշ գորշահողերը և բուսական բնական համակեցությունները: Մարդու կողմից ստեղծվել է կուլտուրական լանդշաֆտ՝ չոր մերձարևադարձային պտղաբուծության, այգեգործության և բանջարանոցային տարածությունների գերակշռությամբ: Անապատային և կիսաանապատային լանդշաֆտի բնական տեղամասեր մնացել են միայն անջրդի տարածություններում, ցանքատարածությունների դաշտամիջյան ճանապարհների եզրերին, կամ ոռոգման կանալների շուրջ չմշակվող տարածքներում, արոտավայրերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում և ջրաձահձային էկոհամակարգերում:

Արարատյան հարթավայրի հյուսիսային մասը, որն ընդգրկում է Քասախ, Հրազդան և Վեդի գետերի ավազանները, հանդիսանում է Հայաստանի հիմնական գյուղատնտեսական շրջանը, սակայն հողերի աղակալման և ճահճացման պահճառով հարթավայրի ավելի քան քառորդ մասը գյուղատնտեսական նպատակներով չի օգտագործվում: Ընդ որում, այդպիսի տարածքների ընդարձակմանը նպաստում են նաև ոչ նորմավորված ոռոգումը, դրենաժային համակարգի անբավարար վիճակը և ջրալույծ աղեր պարունակող ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացումը:

Արարատյան դաշտավայրի ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի պատճառ է հանդիսացել խոնավ ցածրավայրային աղուտային մարգագետինների առկայությամբ: Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այպես կոչված՝ չալաների հողեր: Այս գոտում առանձնակի տեղ են զբաղեցնում նաև ցածրավայրային ճահճային լանդշաֆտները, որոնք հիմնականում ենթարկված են մելիորացիայի ու կուլտուրականացման: Որոշ վայրերում հանդիպում են թաքիրանման հողեր և ավազի բլրակներ: Հարավ արևելյան նախալեռնային ցածր լեռնային նստվածքային ջրամերժ ապարներ ունեցող տարածքներում, շնորհիվ չոր կլիմայի, առաջացել են անապատա-կիսաանապատային լանդշաֆտների որոշակի տիպեր՝ Բեդլենդներ, որոնք գերծ են բուսական ծածկույթից: Կիսաանապատային լանդշաֆտների առանձնակի հատկություններից մեկն էլ գիպսի կուտակումն է:

3.3 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Տարածաշրջանի հողային ծածկույթն իրենից ներկայացնում է ՀՀ տարածքի տարբեր մասերում հանդիպող տարաբնույթ հողածածկեր: Տարածաշրջանի ցածրադիր մասում տարածված են կիսաանապատային հողերը, որոնք տարածաշրջանում կազմում են աննշան տոկոս:

Նախալեռնային շրջաններում լայնորեն տարածված են խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը: Տարածաշրջանը ծածկված է ջրաբերուկային-մարգագետնային՝ հնումոռոգվող հողերով, անտառային բուսականությունը՝ բնահողային ծածկույթին համապատասխան, նույնպես ենթարկված է ուղղահայաց գոտնորման: Առավել ցածրադիր

տեղերում, Արաքսի և նրավտակների փուխը բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում կուլտուրականացված են ևտոռովում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Վերջին տասնամյակներին իրականացվել են աղուտային հողերի աղազրկման և կուլտուրականացման աշխատանքներ:

Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ակալախողերը:

Տեղ-տեղ երևում են թափրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխը նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

3.4 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տեղանքի կլիմայական բնութագիրը ներկայացնելու համար օգտագործվել են տարածաշրջանում գործող Արտաշատ օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների տվյալները: Օգտագործելով կլիմայական հաշվարկային մեթոդները, հաշվարկվել են տեղանքի կլիմայական բնութագրերը:

Շրջանի կլիման չափավոր տաք է: Ձմեռը տևական և համամատաքար տաք է, թույլ քամիներով, բավական կայուն ու հաստ ձնածածկ շերտի գոյացումով: Ամառը շոգ է, չոր:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 11.7°C , հունվարինը՝ -4°C , ապրիլինը՝ 12.8°C , հուլիսինը՝ 21.6°C , հոկտեմբերինը՝ 13°C : Ջերմաստիճանի ամսական ամպլիտուդան 8.6°C է: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝

-29°C , դիտվել է հունվարին, բացարձակ առավելագույնը՝ $+43^{\circ}\text{C}$ է՝ դիտվել է օգոստոսին:

Հողի մակերևույթի վրա միջին տարեկան ջերմաստիճանը 9°C է: հունվարին՝ -5°C , իսկ հուլիսին՝ 23°C : Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 70 սմ:

Օդի միջին տարեկան ճնշումը 861.0 մբ է, բացարձակ խոնավությունը 8.2մբ է, իսկ հարաբերականը՝ 72%:

Տարեկան մթնոլորտային տեղումներիքանակը կազմում է 265մմ: Տեղումների առավելագույնը դիտվում է օգոստոսին՝ 72 մմ, իսկ նվազագույնը դեկտեմբերին՝ 20 մմ:

Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 10 սմ: Ձյան տեսքով տեղումների քանակությունը 124 մմ է: Նոյեմբերի 13-ից դիտվում է կայուն ձնածածկույթ, որը վերանում է ապրիլի 5-ին: Ձյան ծածկոցի առավելագույն շերտի բարձրությունը 10սմ է, միջինը՝ 10 սմ:

Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝

- կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից

- կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 5.4-ում:

Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Աղյուսակ 5.4

Կլիմայի գործոնները	Հարմարավետությունը	Անհարմարավետությունը	
		գերտաքացում	սառեցում
Օդի ջերմաստիճանը, °C	12-14	24-ից բարձր	-30-35, -1.5 մ/վրկ, -25, 2.0 մ/վրկ, -15, 3. մ/վրկ Քամու դեպքում
Քամու արագությունը, մ/վրկ	0.5-3.0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ քաղցածր ջերմաստիճանի դեպքում
Հարաբերական խոնավությունը, %	30-70 մայիս-օգոստոս	30-ից փոքր 70-ից բարձր Մնացած 9 ամիս	80-ից բարձր չկա

Օդի միջին ամսական ջերմաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին գերազանցում է 24 °C: Գերտաքանցման փաստը ինչպես համայնքներում նկատվում է տարվա ընթացքում 2 ամիս՝ 62 օր:

12-14° C գերազանցման դեպքերը նկատվում են ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին:

Օդի հարաբերական խոնավության տեսանկյունից մարտից մինչև հոկտեմբեր ամիսները դիտարկվում են ինչպես հարմարավետ, 80%-ից բարձր խոնավություն չի արձանագրվել:

70%-ից բարձր խոնավություն նկատվում է հունվար, փետրվար ամիսներին, և նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների ընթացքում: 3.0 մ/վրկ-ից մեծ քամու արագություն չի դիտարկվում:

Դեկտեմբերից–մարտ ժամանակահատվածում օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտարկվում է -15°C -ից բարձր, սակայն նշված ամիսներին քամու արատությունը գտնվում է 1.4-2.8մ/վրկ-ի սահմաններում:

Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը ($^{\circ}\text{C}$)

Աղյուսակ 1.2

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Արտաշատ քաղաք,	-4	-1.3	5.3	12.8	17.7	21.6	25.5	24.5	20.0	13.0	6.0	-0.8	11.7

Միջին ամսական և տարեկան օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 1.3

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Արտաշատ քաղաք	78	73	64	57	59	54	51	51	57	66	75	79	64

Քամու միջին ամսական և տարեկան արագությունը (մ/վրկ)

Աղյուսակ 1.4

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Մասիս քաղաք	0.9	1.3	1.6	1.6	1.3	1.2	1.3	1.2	1.2	0.9	0.8	0.7	1.2

Ամառվա շոգ ամիսների ժամանակահատվածի անալիզը ցույց է տալիս, որ նշված համայնքներում 1T, 2T և 3T դասերի «շոգ եղանակները դիտարկվում են հուլիս, օգոստոսամիսներին, որի ընթացքում առաջանում է ջերմային բեռնվածություն մարդու օրգանիզմի վրա: Հարմարավետության ժամանակահատվածը ժամը 13-ից մինչև ժամը 21-ը նշված համայնքների համար կազմում է 83%, անհարմարավետության ժամանակահատվածը 17%:

Անհարմարավետության պայմանների հաշվառման չափանիշը հանդիսանում է անհարմարավետության ժամանակահատվածի տևողությունը:

Տարվա կտրվածքով անհարմարավետության ժամանակահատվածը մեծ է 8% (17%) տարեկան ժամանակահատվածից, որը հանգեցնում է նրան, որ նախագծման ժամանականիրաժեշտ է նախատեսել միջոցառումներ:

3.5 Օդային ավազան

Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Մասիս համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎՕ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎՕ վիճակագրական տեղեկագրի՝ Մասիսի համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 20 500 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ.3), Մասիս համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշու մասնիկներ՝ 0,3մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 0,8 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,015 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ³:

Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 1.5 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ-ն (ՍԹԿ_{փոշի} = 0,15 մգ/մ³):

Աղ. 3 *Մթնոլորտի աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):*

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ ³)			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

3.6 Բուսական և կենդանական աշխարհը

ՀՀ Արարատի մարզի տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Կենսաբանական ռեսուրսներ: Կիսաանապատային գոտու կենսառեսուրսները աչքի չեն ընկնում իրենց բազմազանությամբ, սակայն կերհանդակները ներկայացված են օշինդրային, օշինդրա-էֆեմերային, օշինդրա-հացազգային, օշինդրա-օշանային և օշանայինբուսական համակեցություններով: Ուտելի և համեմունքային բույսերից կարելի է նշել բոխին, շրեշը, շուշանը, դանձիլը: Եթերայուղատու բույսերից են ուրցը, անթառամը, օշինդրը: Բնական խեժով հարուստ են հատկապես տրագականտային գազերը: Որսի օբյեկտ են համարվում լորը, քարիկաքավը, մի շարք ջրլողոջուններ /սևփարփար, մեծուզակ, փոքրուզակ, կոնչանբաղ, մոխրագույն բաղ և այլն:

Մարզի բուսականության առավել տարածված տեսակներից են կիսաանապատային, տափաստանային տեսակները, որոնք զբաղեցնում են տարածքի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասերը:

Մարզի կլիմայական պայմանները թույլ են տալիս այդ հողերի վրա աճեցնել տեխնիկական, այգեգործական և մերձարևադարձային, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաներ:

3.6.1 Բուսական աշխարհը

Անապատային չորասեր բուսականության բնորոշ բուսատեսակներից են շորան, բալախը, սարսազան որոնք դիմանում են աղակալմանը: Քաղաքի հարավային մասում գերակշռում է հալոֆիտային, հալոքսեռոֆիտանապատային բուսականությունը - *Salsola eticoides*, *S. dendroides*, *S. nitraria*, *Haiocnemumstrobilaceum*: Արևելքում օշինդրա-էֆեմերային կիսաանապատային բուսականության գերակշռությամբ - *Artemisia fragrans*, *Kochiaprostrata*, *Capparis herbacea*, *Ceratoides papposa*, *Atraphaxi sspinosa*, *Rhamnus paiiasii*, *Tanacetum argrophyllum*, *Poa bulbosa*, տեսակներ - *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*: Կիսաանապատային գոտու համար բնորոշ բուսատեսակներից են օշինդր բուրավետը, Օշան գորշ, Օշան հավամբզանման, գեղաձնկիկ մատիտեղանման, լերդախոտ ալեհեր, ավելաբույսգետնատարած: Հազվագյուտ և անհետացող գիպսոֆիտ անապատային բուսական ֆորմացիաներ *Cephalorrhynchustakhtadzhianii*, *Zygophyllumatriplicoides*:

Մարզի էնդեմիկ տեսակներն են կտավատազգիներ (*Linaceae*), մեխակազգիներ (*Caryophyllaceae*):

Մարզի տարածքում հանդիպող և անհետացող բուսական տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀկառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N71-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենդանիների Կարմիր գրքից:

Էնդեմիկ տեսակն է իշակաթնուկ ազգիներ (*Euphorbiaceae*):

3.6.2 Կենդանական աշխարհ

Տարածքը հարուստ է կիսաանապատային գոտուն բնորոշ սողուններով, ինչպիսին են միջերկրածովային կրիան /*Testudograeca*/, բարեկազմ օձ ազլուխ մողեսը /*Ophisopselegans*/, Շտրաուխի /*Eremiasstrauchi*/ և Անդրկովկասյան /*E. pleskei*/ մողեսիկները, Անդրկովկասիան թաքիրային կլորագլուխը /*Phrynocephalushelioscopuspersicus*/, մողեսաօձը

/Malpolonmonspessulannus/, վզնցավոր /Eireniscolaris / և՛ այլական /E. punctatolineatus / էրենիսները, կարմրավոր սահնօձը կամշահմարը / Coluberschmidti/ և կապարագույն սահնօձը /C. nummifer/, Անդրկովկասյան գյուրգան /Viperalebetina/: Կրծողներից – սովորական /Microtusarvalis/ և հասարակական /M. socialis/ դաշտամկները, հարավային /Merionesmeridianus/, փոքրասիական /M. blackleri/ և Վինոգրադովի / M. vinogradovi / ավազամկները: Կատվագզիներից - եղեգնակատուն /Felischaus/: Ջրածահձային էկոհամակարգերում հանդիպում են Կասպիական կրիան/Mauremiscaspica/ և լճագորտը/Ranaridibunda/:

Նշված համայնքային տարածքներում հանդիպում են ամենուր ողնաշարավորներից լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակ դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտօջի, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Կենդանիների էնդեմիկ տեսակներն են՝ հայկական մկնիկ, կովկասյան տարավոն, Չեռնովի մերկաչք:

3.6.3 Պատմամշակույթային հուշարձաններ

Արարատի մարզի Մասիս քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 5 հուշարձան (4 միավոր):

հուշարձան	կառուցված	Վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Գերեզմանոց	19-20 դդ.	հվ եզրին	—	3.57/1		Մբ. Աստվածածին եկեղեցուց 200 մ հս-աե
Եկեղեցի Մբ. Աստվածածին	19 դ.	հվ եզրին	—	3.57/2	S	կիսավեր
Խաչքար	1542 թ.		—	3.57/4.1	Հ	մատուռի ներսում
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտու	1983 թ.	գ. մ.	—	3.57/3	S	քանդ.՝ Գ. Եփրեմյան

հուշարձան	կառուցված	Վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
մ գոհվածներին						
Մատուռ Մբ. Թադևոս Առաքյալ	16 դ.	հվ եզրին	—	<u>3.57/4</u>	S	վրկռ.՝ 20 դ., Մբ. Աստվածածին եկեղեցուց հս-ամ

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Արտադրատարածքում շահագործման ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունում մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է հետևյալ միջոցառումները.

- Աշխատանքի ընդունվող բոլոր աշխատողների հետ անցկացնել նախնական ուսուցում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ:
- Երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:
 - Տրանսպորտային մեքենաների և արտադրական սարքավորումների ղեկավարումը թույլատրել այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաների կամ սարքավորումների: ղեկավարման իրավունքի վկայական:
 - Բնական աղետների ժամանակ (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն) ընկերության արտադրական աշխատանքը կանգնեցվում է և անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:
 - Հրդեհի ժամանակ հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:
 - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ընթացքում հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների ավելացումներ:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները).

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է արտադրական գործընթացների ցուցանիշների վերահսկումը,
- II կարգի վտանգի ժամանակ սահմանափակվում է ջերմային գործընթացները,
- III կարգի վտանգի ժամանակ կարճաժամկետ դադարեցվում է շոգեկաթսաների աշխատանքը առանց ջերմային ցանցերի դատարկման:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների միջոցառումները իրականացվում են անմիջապես արտադրամասի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից:

- Չոր և շոգ եղանակներին բաց հրապարակներում և մերձակա ճանապարհներին կատարվելու է ջրցանում՝ փոշենստեցման նպատակով:
- Նախատեսվում է հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղայի աղբով և այլ տեսակի թափոններով:

Տեղեկություններ թափոնների գործածության ոլորտում նախատեսվող միջոցառումների վերաբերյալ

«Ինտերնեյշնլ Մասիս Տոբակո» ՍՊ ընկերության կողմից մշակվել են ձեռնարկությունում գոյացող վտանգավոր թափոնների թվով 13 անձնագրերը, որոնք համաձայնեցվել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ:

Թափոնների անձնագրերը պարունակում են տեղեկություններ թափոնի քանակության, վտանգավոր հատկությունների, ծագման, կազմի, հրդեհապայթյունավտանգության, կոռոզիոն հատկությունների, ռեակցիոնունակ - կության, վնասազերծման ու վերամշակման առաջարկվող եղանակների, տեղափոխման ընթացքում սահմանափակումների, գործածության ժամանակ ձեռնարկվելիք անհրաժեշտ նախազգուշական միջոցառումների մասին:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նպատակով «Ինտերնեյշնլ Մասիս Տոբակո» ՍՊԸ-ում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է թափոնների հաշվառում: Գոյացող թափոնների հաշվառումն իրականացվում է նախնական և վերջնական գրանցամատյաններում: Նախնական գրանցամատյանի մեջ հաշվառվում է թափոնների ամսական քանակությունները տեղամասում, գրանցվում և հաստատվում է աղյուսակը լրացնողի կողմից: Նախնական գրանցամատյանից տվյալները գրանցվում են վերջնական գրանցամատյանի մեջ:

Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաւերել տեխնիկական միջոցների, բացառել անսարք վիճակում գտնվող սարքավորումների օգտագործումը
- տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

5. ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բազմաբնակարան բնակելի բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նալավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «27» Փետրվարի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Մասիս ք. Հրանտ Վարդանյան փողոց 10

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 29.06.2018թ. սղմ.6960

4. ՀՈՂԱՍԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-003-0296-0154

Մակերեսի չափը (հա)՝ 4.347

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 27022019-03-0063, գաղտնաբառ՝ KBUDQH5GVS2Q

2485/66

Էջ 1

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	03-003-0296-0154-001	Վարչական շենք	4973.7 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
2	03-003-0296-0154-002	Արտադրամաս	19332.8 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
3	03-003-0296-0154-003	Պահակատուն	19.5 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
4	03-003-0296-0154-004	Պոմպակայան	9.7 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
5	03-003-0296-0154-005	Ավտոտնակ	72.1 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
6	03-003-0296-0154-006	Կաթսայատուն	166.3 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
7	03-003-0296-0154-007	Պահակատուն	3.7 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
8	03-003-0296-0154-008	Պահակատուն	43.8 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
9	03-003-0296-0154-009	Ջրավազան	213.2 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
10	03-003-0296-0154-010	Պահակատուն	8.7 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
11	03-003-0296-0154-011	պարիսպ	29.25 ք.մ., 58.5 խ.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով: Սեփականության իրավունքի գրանցման վկայականի իրական ամսաթիվն է 04.07.2018թ.

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Սոս Թումասյան
 գրանցումը անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ
 գույքի ամսագրից հեռանում է



Վկայական N 27022019-03-0063, գաղտնաբառ՝ KBUDQH5GV52Q

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2013 թվականի հունիսի N176և որոշմամբ

**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
(ՄԱՏԱԿԱՐԱՐ - ԲԱԺԱՆՈՐԴ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ))**

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 0X 20B/3 669²

Վ. Միրզաչյան « 01 » 08 2013 թվական
պայմանագրի կնքման վայրը

Մատակարարը՝ Կայ/Զու զարպադ Կ ՊԸ Վ Երևան
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Միրզաչյան ԳՊԾ Վ Միրզաչյան
(մասնատիրոջ անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս Կրկոբե Մ. Մարտիրոսյան
(պաշտոնը, անունը, ազգանունը)

որը գործում է ՊԸ Խակոբյան Զար Կարգի հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և **Բաժանորդը** Վերնընկեր Վախ Տարակ ԱՊ
(կազմակերպության անվանումը, գաղափարաձևի համակերպիչ)

Վ. Վախ Միր Մակար Խակոբ
գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,

Օրսեպանյան 10
գաղափարաձևի համակերպիչի գտնվելու վայրը)

ի դեմս Զորենի Կ Վ. Միրզաչյան
(պաշտոնը, անունը, ազգանունը)

որը (ով) գործում է Խաճապ և Կրկոբե հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի
մասին.

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն են.
1) **Հանձնաժողով**՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություն-
ները կարգավորող հանձնաժողով.

- 2) ՉՄՕԿ՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հունիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N95Ն որոշման 1-ին կետով հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ.
- 3) **Հաշվարկային ամիս**՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացույցային անսվա առաջին օրվա ժամը 11:00-ին և ավարտվում է հաջորդ օրացույցային անսվա առաջին օրվա ժամը 11:00-ին:
- 4) **10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդ**՝ անձ, որի ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացույցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցել է 10 հազար խորանարդ մետրը (Ցելսիուսի 20 աստիճանի և 101.325կՊա կամ 1.033227կգ/սմ³ ճնշման պայմաններում):

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատակարարել բնական գազ, իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել մատակարարված բնական գազի դիմաց:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊՈՐՏԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և Բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով, ՉՄՕԿ-ով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:
4. Մատակարարը պարտավոր է.
 - 1) սահմանագատման կետում ապահովել Բաժանորդի գազամատակարարումը՝ «Բնական վառելանյութային գազեր արդյունաբերության և կոմունալ-կենցաղային նպատակների համար» ՉՄՕՍ 5542-87-ով սահմանված պայմաններին համապատասխանող

_____ բնական գազով.
 (Ռոտամետրացված կամ ցորակաչափով)

- 2) 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդին բնական գազ մատակարարել սույն պայմանագրով ամրագրված ժամանակացույցով և չափաքանակներով (Հավելված №3).
- 3) կազմել և Բաժանորդին ներկայացնել մատակարարված բնական գազի համար վճարման փաստաթղթերը՝ ՉՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով.
- 4) չխոչընդոտել իր սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի կայան Բաժանորդի կամ նրա ներկայացուցիչների մուտքը՝ օպերատիվ տեղեկատվություն ստանալու, կամ առևտրային հաշվառքի սարքերը կնքելու, կամ կնիքների առկայությունը ստուգելու, կամ բնական գազի որակական հատկանիշներն ուսումնասիրելու նպատակով բնական գազի մուշտաման համար.
- 5) ՉՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխան տալ Բաժանորդի դիմումին (բողոք, հարցադրում)՝ հանգամանորեն ներկայացնելով

Բաժանորդի դիմումի ամենօրյա մոնիթինգը իրավական դաշտը, նրա վերաբերյալ փունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն Բաժանորդին անբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ.

- 6) գազասպառման համակարգում վթարների և վթարային իրավիճակների դեպքերում Բաժանորդի կամ այլ անձանց ահազանգով դադարեցնել նրա գազաբնական մատակարարումը, վերսկսել այն դադարեցման պատճառների վերացումից հետո՝ ՉՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացնելով Բաժանորդին.
- 7) գազամատակարարման ընդհատման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում՝ բացատրությամբ վթարների ու վթարային իրավիճակների Բաժանորդին նախապես տեղեկացնել և գազամատակարարումը վերականգնել ՉՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում.
- 8) սույն պայմանագրի լուծման կամ գազամատակարարման ժամանակավոր դադարեցման վերաբերյալ Բաժանորդի դիմումի հիման վրա դադարեցնել Բաժանորդի գազամատակարարումը հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:

5. Բաժանորդը պարտավոր է.

- 1) վճարել մատակարարված բնական գազի դիմաց՝ սույն պայմանագրով և ՉՄՕԿ-ով սահմանված կարգով.
- 2) չօգտագործել բնական գազը կամ գազասպառման համակարգը տեխնիկական պայմաններով, նախագծով և գազասարքավորումների տեխնիկական փաստաթղթերով (անձնագրով) չնախատեսված նպատակներով ու պայմաններով.
- 3) գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների, կամ անսարքության, մարդկանց կյանքին, առողջությանը կամ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող իրավիճակներում, ինչպես նաև բնական գազի արտահոսք հայտնաբերելու դեպքում անմիջապես ընդհատել բնական գազի սպառումը և այդ մասին անհապաղ հայտնել Մատակարարին.
- 4) իր նախաձեռնությամբ գազասպառման համակարգում փոփոխություններ (այդ թվում՝ սարքավորումների, դրանց հզորության, սպառման ծավալների) կատարելու համար, ՉՄՕԿ-ով սահմանված կարգով դիմել Մատակարարին.
- 5) չխոչընդոտել Մատակարարի ներկայացուցիչների մուտքը իր գազասպառման համակարգի տեղակայման տարածք, եթե վերջինս ներկայացնում է իր լիազորությունները հավաստող ծառայողական վկայական՝ լուսանկարով և հայտնում է Բաժանորդի քարտի համարը:
 Մատակարարի ներկայացուցիչ մուտքը գազասպառման համակարգի տեղակայման տարածք իրականացվում է _____

- 6) իր սեփականությունը հանդիսացող (իր կողմից օգտագործվող) գազասպառման համակարգի տեղակայման տարածքը օտարելու (օգտագործման իրավունքը դադարելու) դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու և պայմանագիրը լուծելու համար:

4. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԴՆՃԱՎՈՒՄԸ

6. Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակը որոշվում է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված առևտրային հաշվառման սարքի միջոցով՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում: Բաժանորդը իրավունք ունի մասնակցել առևտրային հաշվառման սարքի ցուցմունքի գրանցմանը:
7. 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդի դեպքում Մատակարարի և Բաժանորդի պատասխանատու անձինքը Հաշվարկային ամսվա համար ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում կազմում են երկկողմ ակտ՝ Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակի մասին: Այն դեպքում, երբ Բաժանորդը (Բաժանորդի պատասխանատու անձը) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով չի մասնակցում սույն կետում նշված ակտի կազմմանը, ապա Մատակարարը կարող է ակտը կազմել միակողմանի: Մատակարարի կողմից կազմված ակտը հիմք է հանդիսանում Բաժանորդին վճարման փաստաթուղթ ներկայացնելու համար:
8. Առևտրային հաշվառման սարքի՝ այդ քվեում նոր առևտրային հաշվառման սարքի, տվյալները գրանցվում են սույն պայմանագրի N1 հավելվածում:
9. Առևտրային հաշվառման սարքի խախտման դեպքում բնական գազի քանակը վերահաշվարկվում է ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:
10. Հաշվարկային ամսում, երբ առևտրային հաշվառման սարքն աշխատել է իր չափման ընդգրկության (Qmin-Qmax) դուրս, Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակությունը հաշվարկվում է՝
 - 1) եթե չափումը կատարվել է ընդգրկության ստորին սահմանից (Qmin) ցածր, ապա ծախսն ընդունվում է Qmin տոկոսին հավասար,
 - 2) եթե չափումը կատարվել է ընդգրկության վերին սահմանից (Qmax) բարձր, ապա ծախսն ընդունվում է 110 տոկոսին հավասար:Ճշման անկման սկզբունքով աշխատող հաշվառման սարքերի դեպքում նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվարկային եղանակով՝ համաձայն ԳՕՍՍ 8.563-97-ի՝ «Զեղուկների և գազերի բանակության և ծախսի քանակության չափումը ճշման փոփոխական անկման մեթոդով» և ԳՕՍՍ-8.586-2005-ի՝ «Զեղուկների և գազերի ծախսի ու քանակության չափումը ստանդարտ նեղացնող սարքերի միջոցով»: Այլ սկզբունքով աշխատող հաշվառման սարքերի համար նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվառման սարքի անձնագրային տվյալների հիման վրա՝ համաձայն համապատասխանության սերտիֆիկատի:

5. ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

11. Մատակարարվող բնական գազի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:
12. Հանձնաժողովի կողմից բնական գազի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետում:
13. Հաշվարկային ամսում մատակարարված բնական գազի համար (10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդի դեպքում՝ սույն պայմանագրի 7-րդ կետին համապատասխան կազմված ակտի հիման վրա) Մատակարարը ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում Բաժանորդին ներկայացնում է

է վճարման փաստաթուղթ: Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված համապատասխան սակագնի և մատակարարված բնական գազի քանակության արտադրյալով: Բաժանորդը մատակարարված բնական գազի դիմաց վճարումը կատարում է ներկայացված վճարման փաստաթղթի հիման վրա՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում: Հաշվարկատարային ամսվա ընթացքում մատակարարվելիք բնական գազի համար կանխավճար կամ վճարման այլ երաշխիքներ պահանջելու դեպքերն ու կարգը սահմանվում է ԳՄՕԿ-ով:

14. Բոլոր դեպքերում, եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է մինչև 10 հազար խորանարդ մետր բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական մինչև 10 հազար խորանարդ մետր սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով, իսկ եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է 10 հազար խորանարդ մետր և ավելի բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

15. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:
16. Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակության դիմաց սույն պայմանագրի 13-րդ կետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի պահանջել Բաժանորդից վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

7. ՉՈՐՍ ՄԱԺՈՐԱԿՅՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

17. Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են Կողմերի կամից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաև աբրոտաժային գործողությունները, անհրաժեշտությունները, պատերազմները, ապստամբությունները, հասարակական անկարգությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությունը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց կողմից գործարկված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

- 18. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրի 17-րդ կետում նշված իրավիճակների մասին հնարավորինս սեղծ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 24 ժամակ ընթացքում, տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց վերացման հնարավոր ժամկետները:
- 19. Ֆորս մաժորի ավարտից հետո Կողմերը պարտավոր են անմիջապես ձեռնարկել միջոցներ իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

8. ՎԵՆԵՐԻ ԼՈՒՃՈՒՄԸ

- 20. Սույն պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի դիմելու դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 21. Սույն պայմանագրի №2 և №3 հավելվածները տարածվում են 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդների վրա:
- 22. Սույն պայմանագրի №4 հավելվածը տարածվում է այն Բաժանորդների վրա, որոնց գազապահուստի համակարգը տեղակայված է բազմաբնակարան շենքում:
- 23. Մատակարարը պարտավոր է Բաժանորդին ուղարկվող գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը Բաժանորդին հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ Բաժանորդի կողմից սույն պայմանագրով նշված ծանուցման վայրին, կամ էլեկտրոնային փոստով, եթե առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում կամ հանձնվել են ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԳՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:
- 24. Բաժանորդը պարտավոր է սույն պայմանագրում նշված ծանուցման վայրի փոփոխության դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին գրավոր տեղեկացնել նոր ծանուցման վայրի վերաբերյալ:
- 25. Այն դեպքում, երբ Բաժանորդը գրավոր չի տեղեկացրել Մատակարարին իր ծանուցման վայրի փոփոխության մասին, և Մատակարարը կիրառել է փաստաթղթերի պատշաճ հանձնման բոլոր ձևերը, սակայն առկա չէ Բաժանորդի կողմից համապատասխան փաստաթղթերն ստացած լինելու հավաստումը, ապա Մատակարարի կողմից սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված, թեև և Բաժանորդն այլևս այդ գտնվելու կամ բնակության վայրում չի գտնվում:
- 26. Մատակարարը և 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդը, ելնելով Բաժանորդի գազապահուստի համակարգի առանձնահատկություններից, իրավունք ունեն սույն պայմանագրի N3 հավելվածում սահմանել լրացուցիչ պայմաններ:







10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒՃՈՒՄԸ

- 27. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

- 28. Մատակարարի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձին (որոնք բնական գազը ձեռք են բերում էլեկտրական կամ ջերմային էներգիա արտադրելու նպատակով) միջև կնքված պայմանագրերն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:
- 29. Հանձնաժողովի կողմից բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում ընելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:
- 30. Սույն պայմանագիրը կարող է լուծվել.
 - 1) Կողմերի փոխհամաձայնությամբ,
 - 2) Բաժանորդի կողմից միակողմանի, այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և օգտագործած բնական գազի, իսկ բազմաբնակարան շենքում գտնվող Բաժանորդի դեպքում՝ նաև տեխնիկական սպասարկման մատուցված ծառայության համար անբողջությամբ վճարելու պայմանով,
 - 3) Մատակարարի կողմից միակողմանի Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:
- 31. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում սույն պայմանագիրը լուծված է համարվում այն պահից, երբ Մատակարարը պայմանագրի լուծման մասին ծանուցում է Բաժանորդին:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՔԱՏՄԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱՅՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

- 32. Հավելված №1 – Համաձայնագիր սահմանազատման և առաքման կետերի մասին
- 33. Հավելված №2 – Համաձայնագիր սահմանազատման կետում բնական գազի որակի և ճնշման մասին
- 34. Հավելված №3 – Համաձայնագիր բնական գազի մատակարարման չափաքանակների և լրացուցիչ պայմանների մասին
- 35. Հավելված №4 – Համաձայնագիր բազմաբնակարան շենքում գտնվող գազա-սպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին

<p>Մատակարար՝</p>  <p>(կազմակերպության անկետում)</p>	<p>Բաժանորդ՝</p>  <p>(կապիտալության անկետում կամ ընտանիքի ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)</p>
<p></p> <p>(անունը, ազգանունը, պաշտոնը)</p>	<p></p> <p>(անունը, ազգանունը, պաշտոնը)</p>
<p></p> <p>(ստորագրությունը)</p>	<p></p> <p>(ստորագրությունը)</p>

Մարտի 23-ին 2013 թվականին Ստալկար Բաժանորդ Կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն

Համաձայնագրի համար՝ 255 9X

(հետախուսահամարը) (հետախուսահամարը)

Ստալկար Բաժանորդ Կազմակերպության համար՝ 233 001936 0330100

Ստալկար Բաժանորդ Կազմակերպության համար՝ 11500049363 00100

(պակի անվանումը և հաշվեհամարը) (պակի անվանումը և հաշվեհամարը)

(Էլեկտրոնային փոստի հասցեն) (Էլեկտրոնային փոստի հասցեն՝ առկայության դեպքում)

00046317 (հարկ վճարողի հաշվառման համարը)

04215053 (հեղուկ վճարողի հաշվառման համարը)



Ստալկար Բաժանորդ Կազմակերպության համար՝ 233 001936 0330100

Ստալկար Բաժանորդ Կազմակերպության համար՝ 11500049363 00100

Հավելված №1

Բնական գազի մատակարարման (Մատակարար Բաժանորդ Կազմակերպություն) 2013 թվականի հունիսի 5-ի N176Լ որոշմամբ հաստատված պայմանագրի

ՀԱՍՏԱՉԱՅՆԱԳԻ
Սահմանազատման և առաքման կետերի մասին

1. Բնական գազի առաքման կետ է համարվում՝ Գազափոխանակի կետի համարը՝ 666 4-125
2. Բնական գազի սահմանազատման կետ է համարվում՝ Վրտ Կետ

Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տվյալները՝

№	Անվանումը	Մակնիշը	Գործարանային №	Տեղադրման վայրը	Տեղադրման ժամանակը
1.	ՔՐՏ-3	Գ-160	0041311	Գազափոխակի կետ	2010 թ.
2.					
3.					
4.					

3. Առևտրային հաշվառքի սարքը (կայանը) հանդիսանում է սպառողի սեփականությունը:
4. Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տեղակայման, փոխարինման և շահագործման (մերառյալ՝ սպասարկման, հերթական ստուգաչափման և նորոգման) ծախսերը՝ անկախ դրա պատկանելիությունից, կրում է Մատակարարը: Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) արտահերթ ստուգաչափման և նորոգման ծախսերն իրականացվում են ԳՍՕ4-ով սահմանված կարգով:

Հսկիչ հաշվառքի սարքի (կայանի) տվյալները

№	Անվանումը	Մակնիշը	Գործարանային №	Տեղադրման վայրը	Տեղադրման ժամանակը
1.	ՔՐՏ	Կ-2	00225	Գազափոխակի կետ	2010 թ.
2.					
3.					
4.					

5. Հսկիչ հաշվառքի սարքը (կայանը) սպասարկում է դրա սեփականատերը:

Մատակարար՝
Ստալկար Բաժանորդ Կազմակերպություն

Բաժանորդ՝
Ստալկար Բաժանորդ Կազմակերպություն



«07» 06 2013 թվական

Հավելված №2
 Բնական գազի մատակարարման
 (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն))
 2013 թվականի հունիսի 5-ի N176Ն որոշմամբ
 հաստատված պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սահմանազատման կետում բնական գազի որակի և ճնշման մասին

1. Սույն հավելվածը տարածվում է 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդների վրա:
2. Սահմանազատման կետում Մատակարարը պարտավոր է ապահովել բնական գազի հետևյալ ճնշումը՝

50
150
կՊԱ
 (մվազագույն ճնշումը)
 (առավելագույն ճնշումը)

պայմանով, որ Բաժանորդը պահպանում է սույն պայմանագրի N3 հավելվածում սահմանված չափաբանակները:

3. Սույն պայմանագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները չբավարարող բնական գազը համարվում է անպատշաճ որակի: Այդպիսի բնական գազ մատակարարելու դեպքում Մատակարարը պարտավոր է 36 ժամվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 48 ժամում Բաժանորդին տեղեկացնել մատակարարվող բնական գազի փաստացի որակի մասին:
4. Բաժանորդն իրավունք ունի ջնդրունել անպատշաճ որակի բնական գազը և Մատակարարից պահանջել վճարելու տույժ՝ ջնդրունված բնական գազի արժեքի տակարարից 30 տոկոսի չափով: Բաժանորդը պարտավոր է տեղեկացնել Մատակարարին անպատշաճ որակի բնական գազը ջնդրունելու վերաբերյալ: Բոլոր դեպքերում, Բաժանորդին մատակարարված գազը համարվում է Բաժանորդի կողմից ընդունված:
5. Եթե Բաժանորդն ամբողջությամբ կամ մասնակի ընդունում է անպատշաճ որակի գազը, ապա սպառված բնական գազի դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Կողմերի միջև փոխհամաձայնեցված կարգով:

Մատակարար՝ Արմավիր
 (անունը, ազգանունը, ճնշումը)
 (ստորագրությունը) 0014031
 «01» 08 2013 թվական
 Մասնաճյուղ
 Արտերկսկի Փնայա
 4.Տ. (տեղադրության դեպքում)

Բաժանորդ՝ Գրիգորյան
 (անունը, ազգանունը, կապույտը)
 (ստորագրությունը)
 «01» 08 2013 թվական
 4.Տ. (տեղադրության դեպքում)

Հավելված №3
 Բնական գազի մատակարարման
 (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն))
 2013 թվականի հունիսի 5-ի N176 որոշմամբ
 հաստատված պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
Բնական գազի մատակարարման չափաբանակների և լրացուցիչ պայմանների մասին

1. Սույն հավելվածը տարածվում է 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդների վրա:
 2. Սույն համաձայնագրով Բաժանորդը և Մատակարարը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են մատակարարվող գազի հետևյալ չափաբանակները.
- (հազար խորմ)

ԱՄԻՍՆԵՐ	Գունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Յուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	ԸՆԴԱՄՆԵՐ 2014 թվական
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
ՉՓՈՒՅՄԱՆԱԿՆԵՐ	450,0	400,0	380,0	300,0	250,0	200,0	150,0	100,0	100,0	150,0	250,0	400,0	3.150,0

3. Հաջորդ օրացուցային տարվա համար բնական գազի անհրաժեշտ չափաբանակների վերաբերյալ տեղեկատվությունը Բաժանորդը Մատակարարին է ներկայացնում օրացուցային տարին սկսվելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ: Սույն կետում նշված տեղեկատվությունը Բաժանորդի կողմից չներկայացվելու դեպքում, հաջորդ օրացուցային տարում մատակարարվող գազի չափաբանակներ են ընդունվում տվյալ ընթացիկ օրացուցային տարվա չափաբանակները:
4. Մատակարարվող բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված չափաբանակների փոփոխությունը կատարվում է Կողմերի փոխհամաձայնությամբ: Բաժանորդը մատակարարվող բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված անսպասելի չափաբանակի փոփոխման վերաբերյալ առաջարկությունը պարտավոր է Մատակարարին ներկայացնել Հաշվարկային ամսվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

Մատակարարը չի մատակարարում բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված չափաքանակները, ապա Բաժանորդն իրավունք ունի Մատակարարից պահանջել վճարելու տույժ՝ չմատակարարված բնական գազի արժեքի 0.5%-ի չափով:

- 6. Եթե Բաժանորդը չի ընդունում բնական գազի՝ սույն հավելվածով սահմանված չափաքանակների ավելի քան 25 տոկոսը, ապա Մատակարարն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ չընդունված բնական գազի արժեքի 0.5%-ի չափով:
- 7. Կողմերը ազատվում են սույն հավելվածի 5-րդ և 6-րդ կետերում սահմանված պատասխանատվությունից, եթե դա պայմանավորված է ԳՄՕԿ-ով սահմանված բնական գազի մատակարարման ընդհատման, դադարեցման կամ սահմանափակման պայմաններով:

8. _____

 _____:

9. Սույն համաձայնագրի 8-րդ կետում Կողմերի կողմից սահմանվող՝ Բաժանորդի գազասպառման համակարգի առանձնահատկություններով պայմանավորված լրացուցիչ պայմանները, չեն կարող հակասել ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված պայմաններին:

Մատակարար՝

 (ստորագրություն)


Բաժանորդ՝

 (անուն, ազգանուն, պաշտոն)

 (ստորագրություն)
 «01» 08 2013 թվական


Հավելված №4

Բնական գազի մատակարարման
 (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն))
 2013 թվականի հունիսի 5-ի N176 կողմնաձև
 հաստատված պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻ

Քաղաքնական շենքում գտնվող գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱԼ

1. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատուցել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն, իսկ Բաժանորդը՝ վճարել մատուցված ծառայության դիմաց:
2. Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցումը ներառում է՝
 - 1) գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների արտաքին զննումը, զողակարերի, պարուրակային միացումների կիպության ստուգումը, իսկ գազի արտահոսքի առկայության դեպքում՝ դրա վերացումը:
 - 2) գազօգտագործող սարքավորումների ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման, օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի համար նախատեսված բացվածքների զննումը, ծխաօդատար ուղիներում քարշի ստուգումը, որի բացակայության (խաթարված լինելու) դեպքում՝ ծխաօդատար ուղիների մաքրումը (ծխաօդատարի մաքրումն ընդգրկում է այն բոլոր աշխատանքները, որոնք անհրաժեշտ է կատարել ծխաօդատարի քարշն ապահովելու համար, այն է՝ մաքրել ծխաօդատարը մեխանիկական եղանակով (ծանրոցի օգնությամբ), ինչպես նաև ցանկացած արգելքի վերացումը, բացառությամբ այն դեպքերի, որոնք կապված են ծխաօդատարի կառուցվածքային անբողջական խաթարման հետ):
 - 3) գազօգտագործող սարքավորումների աշխատանքի ստուգումը՝ գործարկված վիճակում: Անհրաժեշտության դեպքում բաց այրման խցով գազօգտագործող սարքավորումների այրման պրոցեսի կարգավորումը:
 - 4) գազասպառման համակարգի անվտանգ օգտագործման վերաբերյալ սպասարկման պահին տարածքում ներկա գտնվող Բաժանորդի կամ նրա ներկայացուցիչների հրահանգավորումը:
 - 5) այլվող գազերի ազդանշանային սարքերի և ինքնաշատ վթարային կափուրի աշխատունակության ստուգումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Բաժանորդը պարտավոր է՝
 - 1) օգտագործել բացառապես գործարանային արտադրության գազօգտագործող սարքավորումներ, օդափոխության նպատակով նախատեսված ուղիները չօգտագործել որպես ծխատար, ծխաօդատար ուղիներում քարշի բացակայության (խաթարված լինելու) դեպքում չօգտվել գազօգտագործող սարքավորումներից, պահպանել կենցաղում բնական գազից օգտվելու անվտանգության պահանջները:

- 2) սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում ու կարգով վճարել Մատակարարի կողմից մատուցած ծառայության համար:
- 3) գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման նպատակով չխոչընդոտել Մատակարարի ներկայացուցիչների մուտքը իր գազասպառման համակարգի տեղակայման տարածք, եթե վերջինս ներկայացնում է իր լիազորությունները հավաստող ծառայողական վկայական՝ լուսանկարով և հայտնում է Բաժանորդի քարտի համարը: Մատակարարի ներկայացուցիչ մուտքը Բաժանորդի տարածք իրականացվում է _____:

(օրեր, ժամեր)

- 4) ապահովել իր կամ իր ներկայացուցիչ ներկայությունը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարմանը:
4. Մատակարարը պարտավոր է
 - 1) անձամբ կամ այլ կազմակերպության միջոցով տարեկան առնվազն 2 անգամ Բաժանորդին մատուցել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն:
 - 2) սույն համաձայնագրի 2-րդ կետում նշված գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացնել առնվազն մեկ անգամ՝ հոկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում (1-ին հաշվարկային կիսամյակ) և առնվազն մեկ անգամ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում (2-րդ հաշվարկային կիսամյակ), սակայն ոչ շուտ, քան 4 ամիսը մեկ անգամ պարբերականությամբ: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցումը իրականացնել փոխադարձ համաձայնեցված մեկ հաշվարկային կիսամյակում, որի մասին Կողմերը նշում են կատարում սույն Համաձայնագրի 11-րդ կետում:
 - 3) ստուգել գազասպառման համակարգի գազօգտագործող սարքավորումների միացման համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերի պահանջներին: Խախտումներ հայտնաբերելու դեպքում գործել ՊՍՕԿ-ով սահմանված կարգով:
 - 4) առնվազն 3 աշխատանքային օր առաջ Բաժանորդին կամ նրա ներկայացուցիչին տեղեկացնել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման ժամկետների մասին:

3. ՍԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՈՒՄԸ

5. Սույն համաձայնագրի 2-րդ կետում նշված գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման իրականացումը հավաստվում է գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման վերաբերյալ ակտով: Ակտը կազմվում է երկու օրինակից՝ մեկական Մատակարարի և Բաժանորդի համար: Ակտը ստորագրում են Մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցիչը և Բաժանորդը կամ նրա ներկայացուցիչը:

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Սույն համաձայնագրի 1-ին կետով նախատեսված ծառայությունը մատուցելու համար Բաժանորդը Մատակարարին վճարում է Հանձնաժողովի կողմից սահմանված տարեկան վճար:
7. Գազասպառման համակարգի տեխնիկական յուրաքանչյուր սպասարկման համար Բաժանորդը վճարում է Հանձնաժողովի կողմից սահմանված տարեկան վճարի 50 տոկոսը՝ գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության յուրաքանչյուր մատուցման ամսվանը հաջորդող Հաշվարկային ամսում:
8. Տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման դիմաց Բաժանորդը վճարում է ներկայացված վճարման փաստաթղթի հիման վրա՝ սույն պայմանագրով և ՊՍՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:
9. Հանձնաժողովի կողմից գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման տարեկան վճարի փոփոխման դեպքում նոր վճարն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետում:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10. Ծխաօդատար ուղիների նորոգման, վերականգնման կամ վերակառուցման, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերով նախատեսված աշխատանքները՝ բացառությամբ սույն համաձայնագրի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվածի, իրականացվում են ծխաօդատար ուղիների սեփականատիրոջ միջոցների հաշվին:
11. Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացվում է _____:

(1-ին կամ 2-րդ հաշվարկային կիսամյակ)

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

12. Մատակարարը պատասխանատվություն է կրում Բաժանորդի գազասպառման համակարգի անվտանգության ապահովման համար՝ սույն պայմանագրով և ՊՍՕԿ-ով սահմանված կարգով:
13. Սույն համաձայնագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Մատակարարը Բաժանորդին վճարում է տույժ՝ տարեկան վճարի 50 տոկոսի չափով, որը հաշվի է առնվում տվյալ հաշվարկային կիսամյակի վերջին ամսվանը հաջորդող ամսվա՝ Բաժանորդին ներկայացված վճարման փաստաթղթում: Եթե Բաժանորդը և Մատակարարը, սույն համաձայնագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցումը որոշել են իրականացնել մեկ հաշվարկային կիսամյակում, ապա Մատակարարը տույժը հաշվի է առնում տեխնիկական սպասարկման ծառայության յուրաքանչյուր մատուցմանը հաջորդող Հաշվարկային ամսում՝ Բաժանորդին ներկայացվող վճարման փաստաթղթում:
14. Սույն համաձայնագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պարտավորության խախտում է համարվում հաշվարկային կիսամյակի ընթացքում գա-

ԼԵԿՏՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Բ. Զեհաձ 13.11.2019 թվական
(կերժան վայրը)

Մատակարարը՝ **«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ**
Պաշտոն սպառողների սպասարկման տնօրինություն
(Փազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Ի դեմս՝ Խնտրեն՝ Ռ. Ասկարյան
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում՝
լիազորագրի տվյալները)

որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Սպասող՝ «Ինքնիշխան Երևանի Պաշտոն» ՊԲԸ
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը,
ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում՝ լիազորագրի տվյալները)
Կրկնի՝ Ն. Գևորգյան
մյուս կողմից, համատեղ գտնվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի
Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)
հաստատած էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման
կանոններով (այսուհետ՝ ԵՄՕ՝), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով,
կերեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ԳՆԱՅՈՒՆԱԳՐԻ ԱՈՎԻՆԱՆ

- 1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական Էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական Էներգիայի գինաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ՅՈՒՆԱՎԿԱՆ ԻՐԱՎՈՐԻՔՆԵՐՆ ՈՐ
ԳՆՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3. Մատակարարը պարտավոր է՝

1) *Վ. Պետրոսյան ՍՊԸ-ի անվան Ջ. Ֆրանչայզ Կոմպանի ԲԻՏ:*

հացցելու մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական Էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի №1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) №2 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միազին սխեմայի:

2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփյուռման անվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից ապագված էլեկտրական Էներգիայի բանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը:

3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի ապաստ էլեկտրական Էներգիայի բանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով:

4) ապահովել առևտրային հաշվառման սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի անբողջականությունը:

5) Սպառողի ղիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառման սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն:

2 www.ena.am

6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառման սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի:

7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, պնդել, որ դրանք ճշգրիտ հաշվառն են Հանձնաժողովի կողմից սահմանված գլխերային և ցերեկային ժամերին ապագված էլեկտրաէներգիայի քանակությունները:

8) առևտրային հաշվառման սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները:

9) Սպառողի ղիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառման սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում:

10) շուրջօրյա գործող 080000180 կամ 180 հեռախոսահամարով Սպառողի ղիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, ապաստ էլեկտրական Էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ:

11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպասիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր ղիմումին՝ բանավոր, գրավոր ղիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված ղիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

12) Սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով:

13) Սպառողի ղիմումի հիման վրա առևտրային (վերատուգիչ) հաշվիչի էլեկտրական Էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական էջ և տրամադրել մուտքի անուն և զայտնաբան:

4. Մատակարարն իրավունք ունի՝

1) Սպառողից պահանջել վճարելու ապաստ էլեկտրական Էներգիայի գինաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

www.ena.am 3

- 2) Ապառողից պահանջել մատակարարված էլեկտրական Էներգիան օգտագործել սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կշանակությամբ:

5. Ապառողը պարտավոր է

- 1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական Էներգիայի արժեքը իր կողմից սպառված էլեկտրական Էներգիայի բանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:
- 2) մատակարարվող էլեկտրական Էներգիան օգտագործել ոչ կենցաղային կշանակությամբ:
- 3) ազատիվել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը:
- 4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամրոցակախությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին:
- 5) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Ապառողին:

6. Ապառողն իրավունք ունի՝

- 1) կնքել առևտրային հաշվառքի սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում՝ նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների:
- 2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառքի սարքը փոխարինելու համար:
- 3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԶԱՆԱԿԻ ԵՎ ԱՐՇԵՒԻ ԳՆՈՎԱՐԿԸ, ԳՐԱՎԵԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Սպառված էլեկտրական Էներգիայի բանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 8-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Ապառողի առևտրային հաշվառքի սարքի (Ռ3 հավելված) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորմատորների արանֆորմացիայի գործակիցների արտադրյալով բազմապատկելու միջոցով:
8. Եթե առևտրային հաշվառքի սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրական Էներգիայի բանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրական Էներգիայի այդ բանակը:
9. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:
10. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական Էներգիայի բանակության սխաղ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական Էներգիայի բանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջներին:
11. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի սպառած էլեկտրական Էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրական Էներգիայի բանակության արտադրյալով: Հանձնաժողովի կողմից էլեկտրական Էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:
12. Ապառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական Էներգիայի արժեքը վճարում է իր կողմից սպառված էլեկտրական Էներգիայի բանակի և արժեքի մասին Մատակարարի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն տեղեկատվությունը տեղադրվելուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:
13. Հաշվարկային փաստաթղթում սխաղ հայտնաբերելու դեպքում սխաղը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմը ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխաղի փաստը հաստատվելու դեպքում Մատակարարը ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:

14. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների սակայության դեպքում սպառողի վճարումներն առաջնահերթ ուղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված սույնի մարմանը:
15. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները որպես կանխավճար ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը՝ համաձայն սույն պայմանագրի 14-րդ կետի:

4. ԷԼԵԿՏՐԱՄԱՍԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿՈՒ ԳՎԳՎԵՑՈՒՄԸ

16. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների տարեկան կտրվածքով առավելագույն գումարային տևողությունը սահմանվում է ԷՄՕԿ-ով: Եթե սպառողի (բացառությամբ բնակչության) էլեկտրամատակարարման սինժանս ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, քան սահմանված է ԷՄՕԿ-ով, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են սույն պայմանագրի N6 հավելվածում սահմանել այդ ժամանակահատվածը:
17. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին Մատակարարը տեղեկացնում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:
18. Չի թույլատրվում այն սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մարտկային) գծերով կամ կայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամանակահատվածում:
19. Սպառողը (բացառությամբ բնակչության) և Մատակարարը, փոխհամաձայնեցված կարգով իրավունք ունեն սույն պայմանագրի N6 հավելվածում ամրագրել՝

- 1) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետներից սարքերվող էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների այլ ժամկետներ (օր կամ ժամեր), եթե դա չի հանդիմանում բնակչության կամ այլ սպառողների համար ԷՄՕԿ-ով սահմանված էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների ժամկետների խախտման,
- 2) Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժամկետներ:
20. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝
 - 1) սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում,
 - 2) եթե Մատակարարին թույլ չի տրվել Սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով սպասարկել էլեկտրամատակարարվող տարածքում տեղաբնակված էլեկտրատեղակայանները, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի հաշվառչի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից,
 - 3) եթե Սպառողը էլեկտրական էներգիան սպասել է անուրաքանչեք հաշվառչի սարքի միտումնավոր խախտումով կամ անուրաքանչեք հաշվառչի սարքի շրջանցումով,
 - 4) էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման տեխնիկական պայմանների համաձայն՝ էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման համար սահմանված ժամկետի ավարտի դեպքում,
 - 5) Սույն պայմանագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հասցեում գտնվող սպառման համակարգից դուրս էլեկտրական էներգիան սպասելու դեպքում,
 - 6) էլեկտրական էներգիան սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված նշանակությամբ չօգտագործելու դեպքում:
21. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝
 - 1) Սպառողի գրավոր դիմումի համաձայն՝ վերջինիս նշած ժամկետում,
 - 2) էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե Սպառողը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (մասնատող) փաստաթուղթ՝ բացառությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերի:

- 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:
- 22. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և Հանձնաժողովի կողմից սահմանված այլ իրավական ակտերի համաձայն:
- 23. Պայմանագրում ամրագրված մթադային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում վերջինիս Էլեկտրական Էներգիայի մատակարարման սահմանափակումն ու դադարեցումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրի N6 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

5. ԼՐԱՑՈՒՑՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 24. Սպառողի Էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող Էլեկտրատեղակայանների և առևտրային հաշվառի սարքերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման ծախսերն իրականացվում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:
- 25. Սպառողի կողմից առևտրային հաշվառի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի N3 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:
- 26. Սպառողի կողմից (քացատության) բնակչության վերատուգիչ հաշվառի սարք (հաշվիչ) տեղադրելու դեպքում դրա վերաբերյալ տվյալները կշվում են սույն պայմանագրի N3 հավելվածում:
- 27. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ:
- 28. Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում Սպառողի սպառման համակարգն Էլեկտրական ցանցին միացվում է Մատակարարից ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ ժաղելված N9) ստանալու միջոցով՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱԿՏՎՈՒԹՅՈՒՆ

- 29. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 30. Եթե Սպառողի Էլեկտրամատակարարումը իրականացվել է սպասարկման որակի սահմանված պահանջների խախտմամբ, ապա Մատակարարը պարտավոր է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողին վճարել սույն:
- 31. Սպառողի (քացատության) բնակչության) կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու սույն՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բաց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:
- 32. Առևտրային հաշվառի սարքի շրջանցումով Սպառողի կողմից Էլեկտրամատակարարության սպառողից դեպքում սպառված Էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

7. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

- 33. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:
- 34. Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնոստիկ աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կալծակով և անպրոպով ուղղորդվող խորհատատ անձրևներ, ձապքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

35. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ կշռելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

8. ՎՆՃԵՐԻ ԼՈՒՇՈՒՄԸ

36. Սույն պայմանագրի առկայքամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:
37. Սույն պայմանագրի 36-րդ կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9. ԴԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒՓԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ՓՈՓՈՆՄԱՆ ԵՎ ԼՈՒՇՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱԿԵՑ

38. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է ժամկետով: անորոշ Դայմանագիրը բոլոր դեպքերում կնքվում է անորոշ ժամկետով, եթե էՄՕԿ-ով տվյալ դեպքի համար նախատեսված չէ ժամանակավոր պայմանագրի կնքում:
39. Սույն պայմանագրի 38-րդ կետի համաձայն ժամանակավոր պայմանագրի կնքման դեպքում ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման մասին: Եթե ժամկետի ավարտից հետո Սպառողը Մատակարարի ծանուցման բացակայությամբ շարունակում է սպառել էլեկտրական էներգիա, սույն պայմանագրի գործողությունը համարվում է երկարաժամկետ՝ նույն պայմաններով և նույն ժամկետով:
40. Սույն պայմանագիրը լուծվում է՝
- 1) Կողմերի փոխադարձ համաձայնությամբ.
 - 2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.
 - 3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, էՄՕԿ-ով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:

41. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

42. Սույն պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր պայմանով, որ չեն հակասում սույն պայմանագրին, էՄՕԿ-ին, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերին:
43. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:
44. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

10. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

45. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են անձուն՝ ստացակետով, եթե անանձին դեպքերի համար էՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:
46. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 7 օրվա ընթացքում:
47. Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

11. ԳԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲՈՒՄՆԵՄԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՅԱՎԵԿԱԾՆԵՐԻ ՑՈՒՆԿ

48. Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներն են՝
- 1) Սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների մասին N1 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.
 - 2) Սպառողի էլեկտրամատակարարման միացիծ սխեմայի մասին N2 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.
 - 3) Սպառողի (ենթասպառողի) առևտրային (վերառուզիչ) հաշվառքի սարքի տվյալների մասին N3 հավելվածը.
 - 4) Սպառողի (ենթասպառողի) սնման ուղղության, լարման, առավելագույն թուլլատրելի հզորության վերաբերյալ N4 հավելվածը.
 - 5) Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ ակտի մասին N5 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.
 - 6) 0.4 կՎ և բարձր լարման սպառողների (բացառությամբ բնակչության) համար սահմանվող լրացուցիչ պայմանների մասին N6 հավելվածը.

12. ԿՈՂՄԵՐԻ ՎՎԵՐԵԳՄԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար՝	Սպառող՝
«ՀԷՑ» ՓԲԸ	<i>Հ. Քարտեզյան, Մուսաբեյ 217/1</i>
ԽՍՀ տնօրինություն	Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝
ք. Երևան	<i>Վ. Մուսաբեյ 2, Կարապետյան 10</i>
Գտնվելու վայրը՝	Ծանուցման հասցեն՝
Ա. Արսենյան 127	<i>Վ. Մուսաբեյ 2, Կարապետյան 10</i>
(011) 59-12-43 քվ	Ել. փոստ՝
(011) 59-12-51	<i>P. iranyan@imt.am</i>
Չեռախոս	Չեռախոս
gasparyan_lm@ena.am	<i>099-03-42-26</i>
Էլ. փոստ	Չ-ԿԳԳ (իրավաբանական անձի դեպքում)
01520882	<i>09215053</i>
Չ-ԿԳԳ	Բանկ՝
ՅՈՒՆԻԿՐԵԴԻՏ	<i>Հայֆինանսբանկ</i>
«Արդյունաբերական ՓԲԸ»	ՉՈՒՆՈՒՄ
Բանկ	տնօրինություն՝
Գործունեության հասցեն՝	<i>Վ. Ասկարյան</i>
տնօրինություն՝	(ստորագրություն, անուն, մզկանուն)
(ստորագրություն, անուն, մզկանուն)	<i>Վ. Ասկարյան</i>
Կ.Տ.	(ստորագրություն, անուն, մզկանուն)
(ստորագրության դեպքում)	

Վ. Ասկարյան
Վ. Մուսաբեյ 217/1



Ֆախթան N1
Էլեկտրական Էներգիայի մատակարարման պայմանագրի

ՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՆ ՄԻԱՑՄԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ
ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հզորությունը 2x25000 կՎԱ

լարումը 35 կՎ

տեղակայված է 282500 կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայան:

Մուտն իրականացվում է «Պրոք-2» 35 կՎ Օ.Կ. / ՔՄ 10.0 մայր/»:

«Պրոք-2» 35 կՎ Օ.Կ. / ՔՄ 21.6 մայր-1/»:

Հաշվառի սարքերը տեղադրված են Պ/Ը 2584 / ՔՄ-Օ.Կ. / Է 27-Օ.Կ. /
35 կՎ. Բ. Մ. 26 մ.՝


Մատակարար
Արթուր Բ. Գևորգյան
(ստորագրություն, պաշտոն)

(ստորագրություն)

Սպառող
Ժ. Գևորգյան
(ստորագրություն, պաշտոն)

Ֆախթան N2
Էլեկտրական Էներգիայի մատակարարման պայմանագրի

ՄՊԱՌՈՐԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԻԱԳԻՇ ՍԽԵՄԱՆ



Մատակարար
Արթուր Բ. Գևորգյան
(ստորագրություն, պաշտոն)

(ստորագրություն)

Սպառող
Ժ. Գևորգյան
(ստորագրություն, պաշտոն)

ՄՊԱՌՈՒՄ (ԵՆ.ՔԱՍՄՊԱՌՈՒՄ) ԱՌԵ-ԿՏՐԱՅԻՆ (ԿՏՐՍՈՒԳԻՉ)
ՅՈՇ-ԱՆՈՒԹԻ ՄԱՐԹԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հաշվառի սարքի տեղադրման վայրը	Առևտրային հաշվառի սարք (վերատուգիչ հաշվառի սարք)					տրանսֆորմատորի					Սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվառի սարքի անբողջակամության պահպանման պատասխանատու կողմը
	Հաշվիչի				Հոսանքի չափիչ	տրանսֆորմատորի		Էսթրան չափիչ տրանսֆորմատորի			
	տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը	թույլատրելի հոսանքը (Ա)	անվանական լարումը (Վ)	իաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը	տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը	նշտույթյան դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը	ճշտության դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1 ՊԵՏՏԻՎԵԱ ՕՂԻՒ-3 ՅՏԻԴԱ 0354030 088764-19	5110	100		ԴՊԱՌ-ՅՏ 1000/5	0,5	200	ՅԿՈՒ-ՅՏ 3500/100	0,5	350	ՊԿՍԻՊ	
2											
3 ՊԵՏՏԻՎԵԱ ՕՂԻՒ-3 ՅՏԻԴԱ 02906385 79-701935	5110	100		ԴՊԱՌ-ՅՏ 1000/5	0,5	200	ՅԿՈՒ-ՅՏ 3500/100	0,5	350	ՊԿՍԻՊ	
4											
5											
6											
7											
8											
9											
10											
12											
13											
14											

Հաշվաթի սարքի տնօրոնման վայրը	Անտրային հաշվաթի սարք (վերստուգիչ հաշվաթի սարք)					տրանսֆորմատորի					Սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից անօրինվող տարածքներում անտրային հաշվաթի սարքի անբողջականության պահպանման պատասխանատու կողմը
	Հաշվիչի				Հոսանքի չափիչ	Եւրոման փոխարկի		Եւրոման փոխարկի			
	տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը	թույլատրելի հոսանքը (Ա)	անվանական լարումը (Վ)	հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը	տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը	ճշտության դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը	ճշտության դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
15											
16											
17											
18											
19											
20											
21											
22											
23											
24											
25											
26											
27											

Ստատկարսը՝



Սպառող՝



ԱՊՐԻՆԻ (ԵՆԵՐԳԱՊՐԻՆ) ԱՆՍՆԱՆ ՈՐՈՒՄԹՅՈՒՆ, ԼՈՐՄԱՆ, ԼՈՐԻՍԻ, ԼՈՐԻՍԻ ԵՎ ԼՈՐԻՍԻ ՎԵՐԱԿՈՆԵՐՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ ԿՆՈՒՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿՈՆԵՐՏԱՆ

N Բ.Կ.	Մտնան ուղղութիւն անոտում	Հասցեն	Էլեկտրա- ընդունելի կարգ (Ա,Բ,Գ)	Մանուս- գրանան (կոտի խառնուրդ) (ԿՎ)	Արտադրողի թույլատրելի կարգ (ԿՎ)	Աշխատանքային օրերի և ժամերի քանակը (ժամ)	Հայտարարված արժեքը (ԿՎ) աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերին
1	2	3	4	5	6	7	8
1	ԿԻՍՊՊ-1 355ԿՎԿ	ԿԻՍՊՊ-1 ԿԻՍՊՊ-1 ԿԻՍՊՊ-1	II	3.5	20000	30114	20000
2	ԿԻՍՊՊ-2 355ԿՎԿ	ԿԻՍՊՊ-2 ԿԻՍՊՊ-2 ԿԻՍՊՊ-2	II	3.5	20000	30114	20000
3							

Մտնակարգ
Ինժեռն Բ. Մակարյան
(անուն, ազգանուն)
(ստորագրություն)

Ազգանոց
Գ. Գևորգյան
(անուն, ազգանուն)
(ստորագրություն)

1. Սույն աղյուսակի 6-րդ սյունակը լրացվում է համաձայն սպասողին տրված տեխնիկական պայմանագրի: Տեխնիկական պայմանագրի բացակայության դեպքում 6-րդ սյունակը լրացվում է՝
 - 1) 0.22 կՎ լարման սպասողների համար՝ հաշվիչի թուլատրելի հոսանքի և անվանական լարման արտադրյալով:
 - 2) 0.4 կՎ լարման սպասողների համար՝ հաշվիչի թուլատրելի հոսանքի, անվանական լարման և հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով:
 - 3) 6 (10) կՎ և բարձր լարման սպասողների համար՝ հաշվիչի թուլատրելի հոսանքի, անվանական լարման, հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի և լարման չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով:
2. Սույն աղյուսակի 4-րդ սյունակը լրացվում է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N1943Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանների սարքավածքներին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգում նշված էլեկտրա-ընդունելիների կարգերի համաձայն:

(ստորագրություն)

Հ.Մ.

ԱԿՏ
ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՍԳԱՌՈՂԻ ՍԳԱՌՄԱ
ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԿԵՏԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՏԵԴԱԿԱՑԱՆՔՆԵՐԻ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԱՏԱՍԵՆՏՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

- Կողմերի սահմանազատման կետն է՝ Պրոք-2, 3577.04-1
ՍԿՏ 10 ԱՎԿ ԿԼ; Պրոք-2 - 3577.04-1 ԱՏ 11 ԱՎԿ ԿԼ:
- Կողմերի էլեկտրատեղակայանների շահագործման պատասխանատվության սահմանազատման կետն է՝ Պրոք-2 - 3577.04-1 ՍԿՏ 10
ԱՎԿ ԿԼ; Պրոք-2 3577.04-1 ԱՏ 11 ԱՎԿ ԿԼ:
- Սպառողի և ենթասպառողի էլեկտրատեղակայանների սահմանազատման կետն է՝ _____

Մատակարար
Կոմպանիա Բ. Ավետիսյան
Կառավարչության և Բաժնետերերի Առկառու
1520887

Սպառող
Լ. Պարզյան
Կառավարչության և Բաժնետերերի Առկառու
Մ
Կառավարչության և Բաժնետերերի Առկառու

0,4 ԿՎ ԵՎ ԲԱՐՁՐ ԱՐՄԱՆ ՍԳԱՌՈՂՆԵՐԻ (ԲԱՏԱՎՈՒԹՅԱՆՔ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ) ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԿՈՂ ԼՐԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՍԵՆՏ

- Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում Կողմերը պարտավոր են սյուն պայմանագրին կցել սնորածանեղի մաս հանդիսացող տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորության ենթակառուցվածքի վերաբերյալ ակտը, որը կազմվում է համաձայն ԵՄՕԿ-ով սահմանված կարգի:
- Երբ նվազագույն բեռվաներում տեխնիկապես անհնար է առևտրային հաշվառման սարքերի բնականոն աշխատանքը, սպառված էլեկտրաէներգիայի բնակության հաշվարկվում է նվազագույն բեռվաների ամբողջ ժամանակահատվածում փաստացի միացված էլեկտրական ընդունիչների հզորության հիման վրա և ավելացվում առևտրային հաշվիչի ցուցմունքով հաշվարկված էլեկտրաէներգիայի բնակությանը ԵՄՕԿ-ով սահմանված կարգով:
- Մատակարարը կամ Սպառողը կարող են սահմանազատման կետերում տեղադրել էլեկտրական Էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր, որի վերաբերյալ կազմում են երկկողմանի ակտ և կցում սույն պայմանագրին:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրա-Էներգիայի որակը խախտելու դեպքում պատժանքեր և որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիայի մատակարարման ժամանակահատվածը որոշվում են Մատակարարի կամ Սպառողի չափիչ սարքերի գրանցումներով, իսկ այդ սարքերի բացակայության դեպքում՝ համապատասխան հաշվարկներով, Մատակարարի և Սպառողի օպերատիվ փաստաթղթերի գրառումների հիման վրա Այդ մասին Մատակարարը և Սպառողը կազմում են երկկողմանի ակտ:
- Որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար Մատակարարը փոխհատուցում է Սպառողի կրած վնասը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
- Սպառողի (բացառությամբ բնակչության) սարքավորումները, տեխնական պաշտպանության և ավտոմատիկայի սարքավորումները մատակարարի օպերատիվ նկատառություններով հանձնելու դեպքում Կողմերը պարտավոր են այն իրականացնել ԵՄՕԿ-ով սահմանված «Մատակարարի և Սպառողի (բացառությամբ բնակչության) օպերատիվ փոխհարաբերությունների» կարգով:

7. Ազատող պարտավոր է:

- 1) ապահովել փոխանցառումներ կատարելու իրավունք ունեցող Մատակարարի օպերատիվ անձնակազմի շտաբային անդամները իր տեղիում կամ օպերատիվ տարածքներում իրենց իրավասությունների պահպանմանը պարտականությունների կատարման նպատակով:
- 2) անհազույց հայտնել Մատակարարին նրա օպերատիվ ենթակայության ներքո գտնվող սարքավորումներում և ռելեային պաշտպանության ու ավտոմատիկայի սարքավածքներում ի հայտ եկած բոլոր թերությունների և անսարքությունների մասին _____ հեռախոսահամարով:
- 8. Ազատող պարտավոր է չգերազանցել սույն պայմանագրի N4 հավելվածով սահմանված առավելագույն թույլատրելի հզորությունը, ինչպես նաև Մատակարարի հետ համաձայնեցնել առավելագույն թույլատրելի հզորության փոփոխությունը:
- 9. Մատակարարը որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար պատասխանատվություն չի կրում այն ժամանակահատվածում, որի ընթացքում Ազատող գերազանցել է առավելագույն թույլատրելի հզորությունը:

ԱՅԼ ԴԱՅՄԱՆՆԵՐ (ԼՐԱՏՆՈՒՄ ԵՆ ԿՈՂՄԵՐԸ)

- 10. Հարկի և ֆոնդային հարկերի մասին:
- 11. _____
- 12. _____
- 13. _____

Մատակարար
Սեդրիկ Ա. Ասիտյան
 (անուն, մզկուստ և պաշտոն)

 (ստորագրություն)

Ազատող
Լ. Պարզյան
 (անուն, պաշտոն)
Մ. Արևիկ
 (անուն, պաշտոն)

 (ստորագրություն)

ՀՄ-



Հավելված N2
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2016 թվականի նոյեմբերի 31-ի N379L որոշման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ
(ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
(ՄԱՏԱԿԱՐԱՐ- ՈՉ ԲՆԱԿԻՉ ԲԱԺԱՆՈՐԴ)

Հաշվառման քարտ N 07-0010-48-5

Գ. Զեյնալով
(պայմանագրի կնքման վայրը)

«02» 12 2017 թ.

Մատակարարը՝ «Վեոյա Ջուր» ՓԲԸ Ք.Երևան, Արուսյան 66ա
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)
ի դեմս Գլխավոր տնօրեն Կրիստիան ԼՐՖՅԻ, որը գործում է
(անունը, ազգանունը, պաշտոնը)
Ընկերության կանոնադրության և ԼՋ N 0001 Լիցենզիայի
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)
հիման վրա, մի կողմից, և բաժանորդը՝

Հրաչյուհի Երենյան, Վահագն Կարամյան ՄԹ ԲՆՎԿ Կարմիր Կ
(իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ (ունեցող))

(Զայնպուր, 0902, Վերապայտի Ժուլյա Վահագնի Գրքերի ԸՍԸ ԸՍԸ)
(կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը (անունը, ազգանունը),
գտնվելու (բնակության) վայրը, միացման կետի հասցեն)

ի դեմս Զայնպուր Գրքերի ԸՍԸ Վ. Չևարյանի
(պաշտոնը, անունը, ազգանունը)

որը (ու) գործում է Կանոնադրության հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի
մասին.

1. ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1) Սույն պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են.
1) **հանձնաժողով**՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով.
2) **կանոններ**՝ հանձնաժողովի կողմից հաստատված խմբելու ջրի մատակարարման
եվ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման
կանոններ.
3) **առևտրային հաշվառքի սարք**՝ պետական չափազիտական մարմնի կողմից
ստուգաչափված ու կապարակնքված խմելու ջրի քանակի հաշվառքի սարք, որի
նույնականացման տվյալներն ամրագրվում են սույն պայմանագրում.
4) **առևտրային հաշվառքի սարքի խախտում**՝ պետական չափազիտական
մարմնի փորձազիտական եզրակացությամբ հաստատված առևտրային հաշվառքի
սարքի առանձին մասի խախտումը կամ վնասումը, կամ կապարակների
բացակայությունը կամ վնասումը, կամ կեղծումը, կամ սարքի թեկնանուն աշխա-
տակի որևէ այլ խաթարումը՝ արտաքին միջամտությամբ կամ առանց դրա.
5) **հաշվարկային ամիս**՝ ժամանակահատված, որը սկսվում է օրացուցային ամսվա
առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին.
6) **տեխնիկական պայմաններ**՝ մատակարարի ջրամատակարարման և ջրահե-
ռացման համակարգին միանալու, բաժանորդին մատակարարված խմելու ջրովը

հաշվառելու, մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի անվտանգ շահագործման ապահովելու նպատակով մատակարարի կողմից առաջադրվող պայմաններ, որոնք սահմանվում են՝ ելնելով մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թողունակության, հուսալիության, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չխախտելու և դիմող անձի նոր միացման համար անհրաժեշտ ընդլայնման աշխատանքները նվազագույն ծախսերով իրականացնելու պայմաններին:

2. ՊԱՏԱԿԱՐԱՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է բաժանորդին մատուցել՝

Ինչպես գրքի մատակարարման և կառված ջրահեռացման (կեղտաջրերի հեռարձակում)

ծառայություններ (այսուհետ՝ ծառայություններ), իսկ բաժանորդը՝ վճարել դրանց դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԵՎ ՊԱՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

4. Բաժանորդը պարտավոր է՝

- 1) վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում,
- 2) թույլ չտալ առևտրային հաշվառքի սարքի խախտում,
- 3) պահպանել հեռացվող կեղտաջրերի բաղադրությունը՝ համաձայն տեխնիկական պայմանների,
- 4) մատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայական ներկայացնելու դեպքում չխոչընդոտել նրա մուտքն իր սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապրիլի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկայն դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայության համատեղ ստուգման նպատակով,
- 5) առևտրային հաշվառքի սարքի խախտման կամ մատակարարված խմելու ջրի որակի վերաբերյալ կասկած առաջանալու պարագայում առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել մատակարարին,
- 6) ջրամատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի դադարման դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, սույն պայմանագիրը լուծելու և ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ մատակարարը տեղեկանք է տալիս բաժանորդին:

4

5. Բաժանորդն իրավունք ունի՝

- 1) մատակարարի կողմից նախորդ հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկային փաստաթուղթ ներկայացնելու դեպքում կանոններով սահմանված կարգով չվճարել մատուցված ծառայությունների դիմաց,
 - 2) պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ ապահովագրակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
 - 3) կապարակնել առևտրային հաշվառքի սարքը,
 - 4) մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:
6. Մատակարարը պարտավոր է՝
- 1) ապահովել բաժանորդին ծառայությունների հուսալի մատուցումը՝ ծառայությունների ներկայացվող երրմատիվ պահանջներին համապատասխան, իսկ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում նաև՝ պայմանագրով ամրագրված չափաքանակներով,
 - 2) իր հաշվին իրականացնել առևտրային հաշվառքի սարքի տեղակայումը և կապարակնումը՝ կանոններով սահմանված կարգով,
 - 3) առևտրային հաշվառքի սարքի ապահովագրակցումը, ստուգաչափումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
 - 4) առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման դեպքում իր հաշվին տեղակայել նոր առևտրային հաշվառքի սարք՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
 - 5) կանոններով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխան բաժանորդի դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դիմումի առկայությամբ գործող իրավական դաշտը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
 - 6) բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերականգնումը, ինչպես նաև այդ մասին բաժանորդին իրազեկումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
 - 7) կազմել և բաժանորդին ներկայացնել մատակարարված ծառայությունների համար հաշվարկային փաստաթուղթը՝ սույն պայմանագրի և կանոնների համաձայն,
 - 8) բաժանորդի կողմից հաշվարկային փաստաթուղթում վճարման ենթակա գումարի հաշվարկի ճշտությանը կասկածելու դեպքում վերջինիս պահանջով կանոններով սահմանված ժամկետում պարզաբանել մատուցված ծառայությունների քանակի և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում կանոնների համաձայն կատարել ուղղում, չդադարեցնել բաժանորդի ջրամատակարարումը, եթե վերջինս վճարել է ծառայությունների՝ իր կողմից չվճարվելու մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իրեն մատուցված ծառայությունների վճարվելու մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին,
 - 9) գործարկել բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ:
7. Մատակարարն իրավունք ունի՝
- 1) Բաժանորդին ծառայողական վկայական ներկայացնելով և վերջինիս սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող

5

տարածք մուտք գործելով, բաժանորդի հետ համատեղ ստուգել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի զրանցման, ապրիլի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկաս դրա պատկանելությունից) խախտման դեպքերի անկախությունը:

2) միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ բաժանորդի կողմից սույն պայմանագրի 4-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում:

4. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Բաժանորդին հաշվարկային ամսում մատակարարված խմելու ջրի քանակը որոշվում է պայմանագրի հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի զրանցած ցուցմունքներով, իսկ դրա բացակայության դեպքում՝ կանոնների համաձայն:
9. Զրահեռացման (կեղտաջրերի մաքրման) դեպքում հաշվարկման և վերահաշվարկման ժամանակ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակն ընդունվում է հավասար բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակին: Սույն պայմանագրով կարող է սահմանվել, որ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակը հաշվարկվում է առևտրային հաշվառքի սարքի միջոցով:
10. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը զրանցում է մատակարարը՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
11. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում կատարվում է բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
12. Բաժանորդի կողմից վերահաշվարկի արդյունքին անհամաձայնության դեպքում տարածաշրջանները լուծվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում՝ վերահաշվարկված խմելու ջրի արժեքի՝ բաժանորդի կողմից ողջամտորեն հիմնավորված չվիճարկվող մասի վճարման դեպքում բաժանորդին ծառայությունների մատուցումը չի դադարեցվում մինչև վեճի վերջնական լուծումը:

5. ՄԱՏԱԿԱՐԿՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հաշվարկային ամսվա ընթացքում բաժանորդին մատուցված ծառայությունների արժեքը որոշվում է հանձնաժողովի սահմանած սակագների և մատակարարված ծառայությունների քանակի արտադրյալով:
14. Հանձնաժողովի սահմանած սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից:
15. Հաշվարկային ամսվա համար բաժանորդին մատուցված ծառայությունների դիմաց մատակարարը կազմում և բաժանորդին է ներկայացնում հաշվարկային վաստաթուղթ՝ կանոններով սահմանված կարգով:
16. Բաժանորդը հաշվարկային ամսվա համար իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է կանոններով սահմանված կարգով:

17. Կանոններով սահմանված ժամկետում վճարում չկատարվելու դեպքում մատակարարը կանոններով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնում է բաժանորդին՝ վճարման, իսկ վճարումը չկատարելու դեպքում՝ ծառայությունների մատուցման դադարեցման մասին: Եթե զգուշացման պահից կանոններով սահմանված ժամկետում բաժանորդը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը: Բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ վճարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո մատակարարը պարտավոր է վերսկսել բաժանորդին ծառայությունների մատուցումը: Ծառայությունների մատուցումը վերսկսելուց առաջ մատակարարը իրավունք ունի տեղում ստուգել բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:
18. Մատակարարն իրավունք չունի մատակարարվող ծառայությունների համար բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման երաշխիք:
19. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկված խմելու ջրի արժեքը և տույժերը (հաշվարկված լիտրեր, դեպքում) վճարվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

6. ԿՐԿՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

20. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, կանոններով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:
21. Մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը չվճարելու դեպքում ոչ ընակիչ բաժանորդը մատակարարին յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարվում է տուժանք՝ չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:
22. Մատակարարը կանոններով սահմանված դեպքերում բաժանորդին վճարում է տուժանք՝ կանոններով սահմանված չափով և կարգով:
23. Մատակարարը և բաժանորդը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ըրացնում են Կողմերը)

24. Սույն գլխում կողմերի սահմանած այլ պայմանները չեն կարող հակասել սույն պայմանագրին, կանոններին և հանձնաժողովի այլ իրավական ակտերին:
25. 07-0000-48-5 :

8. ԱՆՀԱՐՁԱՎԱՐՔԻ ՈՒՓ (ՖՈՐՍ ՄԱժՈՐ)

26. Կողմերը պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի:

Հավելված
 խմբու ջրի մատակարարման և ջրահեռացման
 (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման
 (մատակարար - ոչ բնակիչ բաժանորդ)
 օրինակելի պայմանագրի




ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՄԱՐՔԻ ՄԱՍԻՆ
 1. Առևտրային հաշվառքի սարքի տեխնիկական տվյալները

№	Անվանումը	Մակնիշը	Գործարանային №	Առևտրային հաշվառքի սարքի տրամաչիծը	Տեղադրման վայրը	Տեղադրման ամսաթիվը
1.	ՕՒ 0010-49-51		1025002849300	15	բաժ. պահ.	
2.						
3.						
4.						

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
 Գտնվելու վայրը՝ Բ.Երևան, Արուսյան 66ա
 Հեռախոս՝ 1-85
 ՀՎՀՀ՝ 02655115
 Էլ. փոստ՝ office@veoliadjur.am
 Հ/հ 11500351562015
 Բանկ՝ «Հայրիզնեպարսկ» ՓԲԸ
 Գործունեության լիցենզիա ԼՋ N 0001
 Գլխավոր տնօրեն՝ Կ. Լ. Լիֆն.

 (ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կատարող՝ 
 (Ստորագրություն)

 (Ստորաբաժանման անուններ)

 (պաշտոնը և անուն, ազգանուն)

Բաժանորդ՝ 
 Գտնվելու վայրը (ընկալության վայրը)՝
 Բ. Երևան, Մայր Հայրանյայտ
 Ծանուցման հասցեն՝ Բաժնյա պահ.
 Էլ. փոստ _____
 Հեռախոս _____
 ՀՎՀՀ 09215053
 Բանկ՝ «Հայրիզնեպարսկ» ՓԲԸ
 Հ/հ 11500004971300100
 Ղեկավար (Ֆիզիկական անձ)

 (ստորագրություն, անուն, ազգանուն)
 Կ.Տ. _____
 (ստորագրություն, անուն, ազգանուն)



ք. Մասիս

01 ապրիլի, 2022թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» Համայնքային կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս Մասիս համայնքի ղեկավար Դ. Համբարձումյանի, մի կողմից և «Ինտերնեյշնլ Մասիս Տարակ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Լ. Գևորգյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է որպես տեղական վճար, վճարել դրանց համար:

1.2. Կատարողը պարտավորվում է կատարել աղբահանություն ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Հրանտ Վարդանյան փողոց 10 հասցեում:

1.3. Աղբահանության հաճախականությունը՝ ամսական մինչև 45 (քառասունհինգ) անգամ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողը պարտավորվում է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ ձևով,

2.1.2. չգոյացնել աղբի կուտակումներ, չստեղծել հակասանիտարական իրավիճակ,

2.1.3. Պատվիրատուին հստակ տեղեկություն տալ այն պաշտոնատար անձանց և նրանց դիմելու ձևերի և միջոցների մասին (պաշտոնատար անձի գտնվելու վայր, հասցե, հեռախոսահամարներ), որոնց Պատվիրատուն կարող է դիմել աղբահանության ժամանակ թերություններ արձանագրելիս,

2.1.4. անհրաժեշտության դեպքում կատարել հավելյալ աղբահանության աշխատանքներ համարժեք վճարումով:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Ծառայությունները պատշաճ չմատուցվելու դեպքում պահանջել Կատարողից պարտավորությունների պատշաճ մատուցում,

2.2.3. ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրի լուծման օրվանից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ ծանուցելով այդ մասին Կատարողին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է ամսական 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

3.2. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց վճարումը կատարում է անկանխիկ: Յուրաքանչյուր ամսվա համար Ծառայությունների դիմաց վճարումը պետք է կատարվի մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Կատարողի մատուցած Ծառայությունների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում յուրաքանչյուր ամսվա վերջում վերջինիս կողմից կատարողական ակտի ստորագրման պահից:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության է ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույլ պայմանագրի անբաժանելի մասը:

6.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

6.4. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» Համայնքային կառավարչական հիմնարկ

ք. Մասիս, կենտ. հրապարակ 4
ՀՎՀՀ 04240324

ՀՀ Ֆին նախ. գործառն. վարչություն
Հ/Հ 900435101655

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Ինտերնեյշնլ Մասիս Տարակ» ՍՊԸ
ք. Մասիս, Հրանտ Վարդանյան փողոց 10
ՀՎՀՀ՝ 04215053

«Հայֆինեսթրանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150004986300100

Մասիս համայնքի ղեկավար
Դ. Համբարձումյան



Գործադիր տնօրենի ժ/դ
Լ. Գևորգյան

